Ինձ էլ հետաքրքրեց, թե ինչու են օրհներգի ժամանակ ձեռքը սրտին դնում, հետաքրքրվեցի, պարզվեց՝ համապատասխան որոշում է կայացվել, կարծես հենց կառավարության կողմից, որ պետք է պետական օրհներգի կատարման ժամանակ ձեռքը դնել կրծքին՝ սրտի մոտ: Որոշման մեջ նաեւ ասվում է, որ պետք է օրհներգը հնչի ակապելլա կամ լայվ:

Կարդացեք՝ էջ 4

Արքայազնը, իր փախած մոխրոտիկին փնտրելու փոխարեն, հավաքել է մի ավտոբուս լիքը՝ բոլոր հեքիաթների հերոսներին ու նրանց հետ շրջում է մարզերում, սիրում-սիրահետում է ընտրողներին՝ անկախ սեռից ու տարիքից: Բրեմենյան երաժիշտները հրճվում են. Тем, кто дружен, не страшны тревоги. Нам любые дороги дороги, յե-յե-յե:

Կարդացեք՝ էջ 5

Փետրվարի 28-ին Փաշինյանի՝ ցուցադրաբար փողոցներում քարշ գալն ու пирожки (իր բառապաշարում երեւի՝ перашки) կրծելն այն ժամանակ, երբ սահմանակից երկրում լայնամասշտաբ պատերազմ էր սկսվել, ինձ 2020-ի բունկերային բարբաջանքի չափ զարմացրեց՝ նրա մարդկային դեգրադացիայի հասնելու տեսակետից:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 31 (4166), 4 մարտ, չորեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Ներկուսակցական ընտրություններից հետո ՔՊ-ում սկսվել են «բազառները»: Բանն այն է, որ Փաշինյանը չի կարողացել անգամ ներկուսակցական կեղծիքներն ու ուղղորդումները կանխել, եւ ընտրություններից հետո ոմանց ստացած ձայներն այնքան կասկածելի են եղել, որ, ստիպված, վարչությունում քննարկել են նրանց հարցը: Հրահանգ է իջեցվել՝ ոչ մի արտահոսք չլինի, որ չխայտառակվեն: Այդուհանդերձ, մեզ հայտնի դարձավ, որ առաջին 50-յակում տեղ զբաղեցրածներից նախկին պատգամավոր, ՔՊ վերահսկող հանձնաժողովի նախկին անդամ Կարեն Գրիգորյանի մասով կասկածներ են եղել, որ նրա 336 ձայնը՝ 38-րդ արդյունքը, ազնիվ քվեարկությամբ չէ ձեռք բերվել, որ նա զանգահարել է տարբեր պատվիրակների եւ խնդրել իր օգտին քվեարկել, ինչն արգելված էր առաջին փուլում, ուստի որոշել են նրան հանել 50-ի ցանկից: Նա ուրախ ավտոբուսի «ուղեւորների» մեջ էլ չէր, ի տարբերություն մյուս թեկնածուների: Խնդրահարույց են եղել նաեւ սյունեցի Դավիթ Դանիելյանի՝ Արայիկ Հարությունյանի մտերիմի ձայները: Ըստ լուրերի, հենց Հարությունյանն է պատվիրակներին խնդրել, որ նա 402 ձայն է ստացել, սակայն բավարար ապացույցներ չեն ունեցել, երեւի նույն հովանավորը ջանք չի խնայել, ուստի նրա հետ կապված որոշում չի կայացվել: Նախկին ԲՀԿ-ական Սերգեյ Բագրատյանի ստացած մոտ 300 ձայնի հարցում եւս վերապահումներ են եղել, սակայն վարչության որոշ անդամներ նկատել են, որ նա ակտիվ է ԱԺ-ում, նախագծերի քննարկումներին է մասնակցում, ելույթ է ունենում՝ ինչո՞ւ չպիտի նրա օգտին քվեարկեին:

Եկեղեցու դեմ Նիկոլ Փաշինյանի սկսած արշավը ժամանակավորապես սառեցնելը դեպրեսիայի մեջ է գցել տիրադավներից ոմանց՝ այն առումով, որ ստեղծված անհարմար՝ օդից կախված իրավիճակն անորոշ ձգվելու է՝ առանց հանգուցալուծման: Մեզ պատմեցին, որ Վայոց Ձորի Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը խոր ընկճախտի մեջ է, չի կողմնորոշվում՝ ինչ անել: Գրեթե նույն վիճակում է Արցախի թեմի առաջնորդը: Եթե փորձեն «անառակ որդու» պես վերադառնալ Վեհափառի գիրկը, կհայտնվեն իշխանական գիլոտինի տակ: Իսկ այս անարգված, ամոթալի կարգավիճակում չեն կարողանում ազատ շփվել մարդկանց հետ, թեմի առաջնորդի գործառույթներն իրականացնել: Մտերիմները խորհուրդ են տվել ժամանակավորապես Հայաստանից մեկնել, ապրել արտերկրում, մինչեւ իրավիճակը որոշակիանա: Տեր Աբրահամը շատ բիզնեսներ ունի, որոնք պետք է կառավարել, նա նաեւ անձամբ է հետեւում որոշ հասարակական նախաձեռնությունների ընթացքին:

Ֆեյսբուքն է կառավարում

Մեր երկիրը ոչ թե օրենքներն ու ավանդույթներն են կառավարում, ոչ թե պետական այրերն են որոշումներ կայացնում, հանրային շահն է իշխանությունների վարքը թելադրում, այլ՝ Ֆեյսբուքը: Այն, որ այս իշխանության ներկայացուցիչներն իրենց նշանակման օրվանից դեռ շատ ավելի վաղ Ֆեյսբուքյան իրականության մեջ էին ապրում եւ Ֆեյսբուքով ամեն ինչ կառավարում, դա վաղուց է հայտնի: Այն, որ պետական գերատեսչությունները եւ դրանց ղեկավարները հանրությանն ուղղված տեղեկատվությունը ոչ թե պաշտոնական էջերով եւ լրատվամիջոցներով են հայտնում, դա էլ է հայտնի: Բայց արդեն կարեւոր որոշումներն էլ են սկսել Ֆեյսբուքյան հանրության կողմից կայացվել, եւ մինչեւ հանրությունն աղմուկ չի բարձրացնում, չի ստիպում, չի թելադրում, իշխանության ղեկին գտնվողները ոչինչ չեն անում: Անգամ պարզունակ հարցերում Ֆեյսբուքն է սկսել որոշել իշխանության վարքը: Ֆեյսբուքն աղմկեց Մաշտոցի նկարն Այբբենարանից հանելու կապակցությամբ, Մաշտոցին վերադարձրին դասագիրք: Ֆեյսբուքն ամոթանք տվեց միլիարդների հասնող պարգեւավճարների ու թոշակների 10 հազարի մասին ասված անհեթեթության մասին, նոր հասկացան, որ անհարմար է նախարարին 7 միլիոն դրամ տալն ու թոշակները գոնե մի չնչին չափով չբարձրացնելը: Մեր հարեւանությամբ պատերազմ է սկսվել, իսկ իրենք, «ուրախ ավտոբուսը» նստած, զվարճանալով, սրտիկներ ցույց տալով, ջրիկանալով, ճանապարհ են գնում՝ մարզերում քարոզչություն անելու: Մինչեւ Ֆեյսբուքն աղմուկ չբարձրացրեց, թուքումուր չտվեց, ո՛չ Անվտանգության խորհրդի նիստ հրավիրեցին, ո՛չ էլ Իրանի հոգեւոր առաջնորդի մահվան առիթով ցավակցություն տարածեցին: Անմեղսունակների այս կառավարությանը որոշումներ պարտադրելու ձեւը հանրությունը գտել է, բայց ստացվում է՝ հանրությունն է երկիրը կառավարում:

Իշխանությունը կառավարության ու համայնքապետարանների կողմից իրականացվող նախաձեռնությունների անվան տակ փաստացի սկսել է նախընտրական կաշառք բաժանել մարդկանց: Գյուլագարակ համայնքից մեզ պատմեցին, որ համայնքապետարանի Արմինե անունով աշխատակիցը զանգում է գյուղացիներին ու ցուցակագրում տանիքի խնդիր ունեցողներին: Հետաքրքրվում, թե արդյոք տանիքն ասբեստի՞ց է, ու ասում է, որ այն փոխելու են: Գյուլագարակի ղեկավարի առաջին տեղակալ Ռուսլան Օհանյանը մեզ հետ զրույցում ասաց. «Մեզ մարզպետարանից գրություն ա եկել, ուղղակի հաշվառում ենք՝ վիճակագրական տվյալներ, ինֆորմացիա ենք հավաքում, որեւէ բան չկա»: Հավաքում եք, որ ի՞նչ անեք այդ ինֆորմացիան: «Ես չեմ կարող մարզպետարանի տեղը ասել, թե հետագայում ինչ կանի»:

ՔՊ-Ն ՓՈԽԵԼ Է ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ տեղեկություններով, սոցհարցումների արդյունքները վկայում են, որ ՔՊ-ի վարկանիշը, չնայած քրտնաջան փիառին, բարձրաստիճան հյուրերի, օրինակ, Վենսի այցին, նաեւ բյուջեի հաշվին ընտրակաշառք բաժանելուն, ոչ մի կերպ չի աճում: Եթե ՔՊ-ն օրեր առաջ սպառնում էր ընդդիմությանը, թե՝ «թույլ չենք տալու Գյումրի 2», այսինքն՝ հետընտրական կոալիցիաներ, ապա հիմա մարտավարություն են փոխել՝ փորձելով հոգեբանական ճնշում գործադրել ընտրողի վրա, նրան հիասթափեցնել ու հուսահատեցնել, որ ներշնչեն՝ «իրենք արդեն հաղթած են», ավելի շատ ձայն են ստանալու, քան 2021-ին: Երեկ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը նման բան հայտարարեց՝ առաջարկելով լրագրողներին «մարժ գալ», որ իրենք 26-ին ավելի շատ ձայն են հավաքելու, քան 21-ին են ստացել: Եվ սա հենց Փաշինյանի գաղափարն է, որը շուտով ՔՊ-ական խմբակը կսկսի լայնորեն կիրառել: Սրանով մի բանի են ուզում հասնել՝ մարդիկ մտածեն, որ, միեւնույն է, ՔՊ-ն արդեն հաղթել է, ի՞նչ իմաստ ունի գնալ ընտրության, քվեարկել եւ հետո հուսախաբ լինել: Գաղտնիք չէ, որ ընտրողների ցածր մասնակցությունից միայն ՔՊ-ն է շահելու: Նրա էլեկտորատը, այսպես թե այնպես, գնալու է ընտրատեղամաս, ու փոքր մասնակցության դեպքում իրենք մեծամասնություն կկազմեն:

ՔԱՐՈԶ

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՒՍԱԿԻՑՆԵՐԸ՝ ԻՋԵՎԱՆՑԻ ՄԵՐՈ՞Ի՞ԿԸ, ԹԵ՞Ռ ԱՐՏԱՇԱՏՑԻ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ

Ականդալային բաժանումից անմիջապես հետո հանրությանը զարմացնելու էստաֆետը կնոջ ձեռքից ընդունեց Նիկոլ Փաշինյանը: Ներկուսակցական քարոզարշավի անվան տակ նա ՔՊ-ականների ուրախ ավտոբուսով ընկավ մարզեմարզ՝ կարճ տեսանյութեր տեղադրելով իր էջում: Արանքում ձեռքի հետ լրագրողի մասնագիտությունն էր հիշել՝ ՔՊ-ական եղբայրության հետ հարցազրույցներ էր անում, «պեռաշկի» ու «կուկուռուզ» ուտում: Այդ կադրերը դիտելով, իհարկե, մարդիկ չէին մտածում՝ ապրի Նիկոլը, տեսեք՝ ռեստորան չի մտնում, նախկիններին պես խաշ-խորոված չի ուտում, այլ զարմանում էին՝ մեր քթի տակ երրորդ համաշխարհայինն է սկսվել, բարեկամական երկիրը ռմբակոծում են, իսկ նա «պեռաշկի» է ուտում, ասում-խոսում, ծիծաղում այն ժամանակ, երբ բոլոր նորմալ երկրների ղեկավարները դիմում են իրենց ժողովուրդներին ու հակառակորդ կողմերին, փորձում են մի բան անել:

Բայց մենք այդպես էլ չհասկացանք, թե ովքեր էին Փաշինյանի կուսակիցները, որոնց շրջանում նա իբր «ներկուսակցական քարոզարշավ» էր անում: Իջեւանցի ծերուկը, որը վարչապետից իր դեղերն էր ուզում, թե՞ արտաշատցի խանութպանը, որը թույլ չտվեց նրան իր խանութ մտնել՝ քարոզ անելու, կամ էլ դիլիջանցինը, որոնց կիրակի օրով, առավոտ կանուխ դիվադադար էր անում վարչապետը՝ շնորհավորելով իշխանության փոխած վերելակը, թե՞ այն երեխեքը, որոնց հետ վարչապետը նկարվեց ու ստիպեց սրտիկ անել՝ մի նշան, որը վաղուց արդեն փչացրել են՝ քաղաքական իմաստ հաղորդելով, որը խորհրդանշում է ՔՊ-ի երկիմաստ սերը: Բոլոր տեղերում վարչապետը բացահայտ քարոզարշավ էր անում: Մասիսում անցնող-դառնողին բարեւում էր, մոտենում էր ծաղիկ, բանջարեղեն վաճառողներին, քաղաքացիներն իրենց հարցերն էին ուղղում իշխանությանը, նա էլ, թե բա՝ ես ի՞նչ անեմ, հո չե՞մ հրահանգելու, դուք ավագանուն նամակ գրեք՝ կլուծեն: Իհարկե, երբեմն Փաշինյանը մոռանում էր, որ չպետք է հրահանգի: «Մանկապարտեզի տնօրեն չնշանակեք, չնշանակեք՝ արգելում եմ»,- ասաց նա միամիտ տավուշեցուն, որն արդարություն փնտրելով, խնդրում էր իր աղջկան մանկապարտեզի տնօրեն նշանակել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ըստ էության, ընտրություններից 3 ամիս առաջ պետական միջոցներով ՔՊ-ն իրականացնում է նախընտրական քարոզարշավ՝ քողարկելով այն ներկուսակցական քարոզարշավի անվան տակ: Ընտրությունների օրինականության դիտարկման քաղաքացիական նախաձեռնությունը (ՕՐԻՆ-26) եզրակացրել է, որ վարչապետի կողմից վարչական ռեսուրսի չարաշահումը շարունակվում է: Այս նախաձեռնությունը, որը ձեւավորել է նախկին պատգամավոր, «Գերագույն խորհուրդ պատգամավորական ակումբ» ՀԿ նախագահ Ռուբեն Թորոսյանը, որը ներկայում ապրում է Լոս Անջելեսում, շաբաթվա կտրվածքով ուսումնասիրում է նախընտրական զարգացումները, քաղաքական ուժերի ակտիվությունը եւ 2 շաբաթում արդեն բազմաթիվ խախտումներ է արձանագրել՝ վարչական ռեսուրսի օգտագործում, թաքնված ընտրակաշառք՝ ի դեմս մանկապարտեզների աշխատողների աշխատավարձի բարձրացման, թոշակների բարձրացման մասին հայտարարության, ընդ որում՝ առանց կառավարության որոշում ընդունելու:

«28.02.26-01.03.26 թթ. ընթացքում, ՔՊ ներկուսակցական քարոզարշավի նպատակով, կառավարության անդամները, ԱԺ պատգամավորները, խոսնակը եւ փոխխոսնակը վարչապետի գլխավորությամբ հանդիպումներ ունեցան Մեծամոր, Էջմիածին, Արմավիր, Արտաշատ քաղաքների, ինչպես նաեւ՝ Տավուշի եւ Լոռու մարզերի բնակիչների հետ: Այդ ընթացքում ՕՐԻՆ-ն արձանագրել եւ իր թիվ 54 եւ 56 գրություններով ԿԸՀ-ին տեղեկացրել է վարչապետի կողմից վարչական ռեսուրսի ենթադրյալ օգտագործմամբ մոտ 15 փաստի մասին»,- ասված է այս նախաձեռնության տարածած տեքստում: ՕՐԻՆ-ը դիմել է ԿԸՀ, սակայն որեւէ արձագանք չի ստացել, ապա կոչ է արել ԿԸՀ-ին՝ հարգել ՀՀ սահմանադրական կարգը:

Այն, ինչ կատարվում էր շաբաթ-կիրակի, Նիկոլ Փաշինյանի իբր ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում, արդյո՞ք սովորական ընտրարշավ չէր, նախընտրական քարոզչություն, նա հանդիպում էր փողոցում մարդկանց, գովազդում կառավարության աշխատանքները՝ վերելակ սարքել, թոշակ բարձրացնել, արդյո՞ք ԿԸՀ-ն այս ամենը վերահսկում է՝ հարց ուղղեցինք ԿԸՀ-ին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովից մեզ պատասխանեցին, որ ԿԸՀ-ն վերահսկում է բացառապես նախընտրական քարոզչության ժամանակահատվածը՝ թե՛ ՏԻՄ, թե՛ համապետական ընտրությունների պարագայում: «ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է մայիսի 8-ից հունիսի 5-ը, հունիսի 6-ը լռության օր է, հունիսի 7-ին էլ, մինչեւ 20:00-ն նախընտրական քարոզչությունն արգելվում է: Սկսած 20:01-ից՝ ցանկացածը կարող է իրականացնել քարոզչություն, որովհետեւ մեր օրենսդրության մեջ չկա սահմանափակում, դրույթ կամ հոդված, որը որ արգելում է քարոզչությունն այն շրջանում, երբ դեռ նախընտրական ժամանակահատվածը չի սկսվել: Այդ շրջանում ցանկացածն ազատ է քարոզչություն իրականացնել: Նույն հարցը մեզ տալիս են ոչ միայն ՔՊ-ի, այլեւ այլ ուժերի մասին, որ, օրինակ, պաստառ են կպցնում, ավտոբուս է շրջում եւ այլն: Բոլոր այս իրավիճակներում, բոլոր քաղաքական միավորներն ազատ են իրենց գործողություններում: Դա մեր կողմից չի վերահսկվում: Մեր կողմից վերահսկվում է բացառապես նախընտրական քարոզչության ժամանակահատվածը»,- փոխանցեց ԿԸՀ խոսնակ **Սեդա Ղուկասյանը**:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՏ ԵՆ. ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ՝ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԻՖԵՐՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ



Տավուշի սահմանամերձ Ոսկեպար, Ոսկեվան, Բաղանիս, Կիրանց գյուղերի բնակիչներին հայտնել են, որ առաջիկայում իրենց տների տանիքների շիֆերներով ծածկերը փոխելու են, տեղադրվելու են նոր, մետաղաթիթեղյա ծածկեր: Գյուղերի վարչական ղեկավարներից տեղեկացա՝ սկզբում հայտնել են, որ փոխելու համար պետք է հաշվառել միայն առանձնատների ծածկերի շիֆերների մակերեսը, սակայն հետո պահանջել են նաեւ տներին կից պահեստների, խորդանոցների շիֆերների ծածկի ընդհանուր մակերեսի տվյալները: Այդ տվյալներն ուղարկվել են Տավուշի մարզպետարան: Մենք տեղեկացանք, որ նման աշխատանքներ կատարվում են նաեւ Լոռու մարզում:

Գյուղերում բնակիչներ կան, որոնք որոշել էին սեփական միջոցներով փոխել իրենց տների ծածկը, սակայն լսելով, որ նման ծրագիր է իրականացվելու, սպասում են դրան: Բնակիչներին հայտնել են, որ շիֆերների մեջ ասբեստ կա, որը քաղցկեղածին է, ուստի շիֆերներով ծածկը պետք է փոխարինել թիթեղներով: Գյուղացիները տարակուսած են՝ եթե շիֆերները քաղցկեղ են առաջացնում, ինչո՞ւ նախկինում այդ մասին չէին հայտնում: Ուշագրավ է, որ վերոհիշյալ գյուղերը տուժել են 2024-ին սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով Ադրբեջանին տարածքներ, պաշտպանական դիրքեր հանձնելու հետեւանքով: ԱԺ ընտրություններից 3 ամիս առաջ իրականացվող այդ ծրագիրը պատահական չէ: Պատահական չէ այն, որ որոշել են վերսկսել սահմանամերձ գյուղերում առանձնատների կառուցման ծրագիրը: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը մարտի 1-ին ֆեյսբուքյան ուղիղ եթեր է մտել Տավուշի մարզի Աճարկուտ գյուղից եւ հայտարարել. «Դուք գիտեիք, որ մենք ունեինք սահմանամերձ բնակավայրերում բնակապահովման ծրագիր, որը հայտնի էր ավելի շատ «16 միլիոնների ծրագիր» անվանմամբ, որովհետեւ 16 միլիոն դրամ աջակցություն էին տալիս՝ որոշ բացառություններով: Որտեղ էլ 21 միլիոն էին տալիս՝ մի քանի գյուղում, առանձնատներ կառուցելու համար, այն քաղաքացիներին, որոնք բավարարում էին որոշակի պայմաններ: Իսկ պայմանները հետեւյալն էին, որ տանը պետք է լիներ անչափահաս երեխա ընտանիքում, կամ առնվազն ամուսինների տարիքը չպետք է գերազանցեր 75 տարեկանը: Հիմա ծրագիրը վերագործարկում ենք 3 կոմպոնենտով: Որպեսզի պարզ լինի, փորձեմ արագ բացատրել: Ուրեմն՝ առաջին կոմպոնենտն այն քաղաքացիների համար է, որոնք չէին հասցրել օգտվել նախկին ծրագրից, սակայն ունեին հողամաս կամ շինթույլտվություն՝ մինչեւ 2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ, իսկ հողամասն էլ եթե ձեռք էր բերվել 24-ի սեպտեմբերից մինչեւ մայիսի 1-ը՝ էդ հատվածում, երբ որ ծրագիրը կրկին երկարացվել էր: 2-րդ կոմպոնենտը նոր քվոտաներն են՝ որոշակի բնակավայրերի համար, որտեղ որ հարաբերականորեն ավելի քիչ տներ են կառուցվել: Բայց դա այն բնակավայրերն են, որոնք որ կային 1-ին ծրագրի մեջ: Եվ 3-րդ կոմպոնենտը՝ մենք ընդլայնում ենք դպրոցաշինության հետ կապված: Մենք մի նման գյուղ ունեինք, դա Վայքի Գոմք գյուղն էր: Բայց մենք հիմա այդ ցուցակն ընդլայնում ենք եւ այլ մարզերի նաեւ, մինչեւ այդ երբեւէ չեղած մարզերի շատ գյուղերում քվոտաներ ենք տալիս, որտեղ որ կառուցվում են նոր դպրոցներ, որպեսզի խթանենք այդ դպրոցներում աշակերտների ավելացումը: Ցանկը հիմա հրապարակված է e-draft կայքում, ես էս ուղիղ եթերի տակ այն կդնեմ, որպեսզի դուք ծանոթանաք, եւ, ամենայն հավանականությամբ,՝ 2-3 շաբաթվա մեջ կառավարության այդ որոշումը կընդունվի, եւ մենք կվերագործարկենք այս շատ կարեւոր ծրագիրը»: Արսեն Թորոսյանն այդ ուղիղ եթերում հայտնել է նաեւ, որ այդ ծրագիրը մինչ այժմ 2 հազար 300 շահառու ունի, որոնք նոր տներ են կառուցել: Հիմա իշխանությունը սահմանագոտու, արդեն նաեւ՝ ոչ սահմանագոտու բնակիչների համար տների կառուցումը ֆինանսավորում է, խոստանում է նրանց տանիքների քաղցկեղածին շիֆերները փոխարինել նոր, մետաղյա թիթեղներով:

Իսկ նախկին իշխանությունների տված նախընտրական նվերների մասին վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 1-ին Նոյեմբերյան քաղաքում, բնակիչների հետ զրույցում ասել էր. «Հիշո՞ւմ ե՞ք, որ ընտրություններին գալիս, տուկի թել էին բաժանում, բրինձ էին բաժանում, որ ձայներ ստանան, բա հիմա կարո՞ւմ տուկի թելով, ո՞ւմ կզարմացնես տուկի թելով կամ բրնձով, կամ 5 հազար դրամով»: Իրենք ընտրակաշառքը զարգացրել են՝ նոր ձեւեր գտել. տուկի թելի ու բրնձի փոխարեն հիմա բնակիչների համար տներ են կառուցում, խոստանում դրանց տանիքների քաղցկեղածին ծածկերը փոխել: Բայց մի մեծ տարբերություն կա. տուկի թելն ու բրինձը մեծահարուստներն էին բաժանում՝ սեփական ֆինանսական միջոցներից, իսկ տանիքներն ու տները պետական միջոցների հաշվին են կառուցում՝ բոլորիս վճարած հարկերից:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՖՈԿՈՒՍ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ «ՀԻՆԳ ՊԱԿԱՍ» ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԻՄՊԻՉՄԵՆՏԻ ԹԵՄԱՆ ՎԵՐԱԹԱՐՄԱՑՆՈՒՄ Է

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից «հինգ պակաս» երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը որոշել է նոր փործության ենթարկել ընդդիմադիր դաշտին եւ կրկին վերաակտիվացնել իր թիմի նախաձեռնած եւ ոչ մի տեղ չտանող իմպիչմենտի գործընթացը: Փաշինյանին իմպիչմենտ հայտնելու ձեռնարկով ՀՀԿ-ն, հիշեցնենք, հանդես էր եկել դեռ անցած տարվա ամռանը, եւ այդ առաջարկի հողի վրա երրորդ եւ երկրորդ նախագահների թիմերի տարաձայնությունները սրվեցին: Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած դաշինքում թերահավատ էին այդ գործընթացի հաջողության նկատմամբ եւ տեւական ժամանակ ձգում էին՝ չէին միանում դրան, ինչի համար դաժան քննադատության էին արժանանում հակառակ ճամբարից: Երկար չեմուչումից հետո, սակայն, անցած տարվա սեպտեմբերին պաշտոնապես հայտարարեցին իրենց համաձայնության մասին՝ ստորագրելով իմպիչմենտի փաստաթուղթը եւ մեղավորներ հռչակելը, որ հետո հայտարարեն՝ չենք մասնակցում ընտրություններին:

Նախօրեին ՀՀԿ-ական նախկին համայնքապետ, իմպիչմենտի վարչապետի թեկնածու Դավիթ Համբարձումյանը, որն այժմ գտնվում է տնային կալանքի տակ, ֆեյսբուքյան էջով տեղեկացրեց, որ իր հարազատ կուսակցությանը նամակ է հասցեագրել՝ համոզմունք հայտնելով, որ վարչապետին անվստահություն հայտնելը Հայաստանում «իշխանափոխության միակ իրական տարբերակն է», եւ խնդրելով քաղաքական խորհրդակցություններ սկսել, համախմբել ընդդիմադիր դաշտը, փողոցային պայքար գեներացնել:

Երեկ ՀՀԿ-ական Հայկ Մամիջանյանը խորհրդարանում, ճեպազրույցի ժամանակ մանրամասներ չհայտնեց, թե ինչպես են պատկերացնում գործընթացի իրագործումը, ինչպես պետք է փողոցային պայքար ապահովեն, ինչպես ստանան պակասող ձայները, կարո՞ղ է ստացվել զարգացումների մասին, ինչպե՞ս կարող էին թիմում չիմանալ: Բացի այդ՝ Դավիթ Համբարձումյանը ՀՀԿ անդամ է, ենթադրվում է՝ նախապես պետք է տեղեկացրած լիներ թիմին: Սակայն Հայկ Մամիջանյանն անցավ ագրեսիվ լեքսիկոնի եւ հստակ պատասխանելու փոխարեն պիտակավորեց մեր հարցադրումները, թե «Հայաստանում իրողություններ են փոխվում ամեն օր, եւ եթե Հայաստանում կա մի ընդդիմադիր, որը կասի՝ ինքը դեմ է փողոցային պայքարին, ես շատ զարմացած կլինեմ: Ես ուզում եմ տեսնել այդ ընդդիմադիրին»:

Որեւէ ընդդիմադիր, բնականաբար, դեմ չէ փողոցային պայքարին, սակայն ընտրություններից մի քանի ամիս առաջ կրկին ասպարեզ բերել իմպիչմենտի մեռելածին գաղափարը եւ դրանով մարդկանց փողոց հանել՝ սխալ է: Մամիջանյանի կարծիքով՝ իմպիչմենտի եւ ընտրական գործընթացներն իրար հակասող չեն, իսկ փողոցային պայքարի պարագայում փոխլրացնող են:

ինչքան շատ լինի մասնակցությունը, այնքան ավելի ցածր տոկոս կստանա իշխանությունը: Ուստի, անկախ զուգահեռ իմպիչմենտի գործընթացից, ընտրություններին մասնակցությունը մեր քաղաքացիների կողմից անհրաժեշտություն է»,- ասաց նա՝ հավելելով, որ իմպիչմենտը նույնական է փողոցային պայքարին:



«Մինչեւ հիմա տեղի ունեցած բոլոր փողոցային պայքարները, այո, իրենց ամբողջական նպատակին չեն հասել, այդտեղ վիճել հնարավոր չէ... Բայց կաթիլը քար է ծակում, եւ մենք պարզապես պարտավոր ենք՝ հաշվի առնելով մեր խոստումները, հաշվի առնելով մեր ասածները: Ես չեմ կարող երաշխավորել՝ այս կամ այն պայքարի փուլն ինչ արդյունքի կհասնի, բայց կարծում եմ՝ պատճառաբանությունը, որ «իսկ եթե չստացվի»՝ պայքարը չսկսելու համար, տեղին չէ»:

Ռոբերտ Քոչարյանի թիմում երեկ նախընտրեցին դեռ լռություն պահպանել, խմբակցության ակտիվը հրաժարվեց մեկնաբանություններ տալ, շարքայիններից **Արսեն Ղազարյանն** էլ ասաց, թե իմպիչմենտի մասին ամիսներ առաջ արդեն իրենց դիրքորոշումը հայտնել են, այն չի փոխվել: Եթե ձեզ փողոցային պայքարի կոչ անեն, կմիանա՞ք՝ հետաքրքրվեցինք մենք: «Ոնց կորոշի խմբակցությունը, հիմա չեմ կարող այդ հարցին պատասխանել»,- ասաց պատգամավոր **Պետրոս Մեղրյանը**: Իսկ ճի՞շտ է ընտրությունից «հինգ պակաս» իմպիչմենտի թեման օրակարգ բերելը: «Էդ իրենք են բերում, ես չեմ ուզում վատ բաներ մտածել, որ ուզում են ընդդիմությանը փործել, կգա ժամանակը՝ որոշում կկայացնեն, մենք էլ կենթարկվենք»:

միանալով «Պատիվ ունեմ»-ի նախաձեռնությանը: Սակայն պարզվեց, որ իմպիչմենտի կողմնակիցները չեն կարողացել բավարար թվով ձայներ ստանալ, եւ անգամ նախագիծը շրջանառության մեջ դնել հնարավոր չէր՝ իրենց ու «Հայաստան» դաշինքի պատգամավորների համատեղ 34 ձայնին եւս 2 ձայն էր պետք: Ամիսներ անց ՀՀԿ-ն թեպետ չի կարողացել պակասող 2 ձայնի հարցը լուծել, բայց որոշել է կրկին օրակարգ բերել իմպիչմենտի այդքան չարչրկված թեման: Գուցե ընտրություններից «հինգ պակաս» նման քայլի իմաստն ընդդիմադիր դաշտին հարվածելն է, բոլորին անհեռանկար, անիրատեսական գործընթացի տապալման այնպես, որ ընդդիմադիր այլ ուժերի հորդորեն փողոց դուրս գալ, միանալ իմպիչմենտի ծրագրին, եւ եթե վերջիններս մերժեն իրենց, հայտարարեն, որ նրանք դեմ են իշխանափոխությանը, եւ ընտրություններից «հինգ պակաս» սկսեն վարկաբեկել նրանց: Մեր հարցերին պատասխանելու փոխարեն **Մամիջանյանը** հայտարարեց, թե նախապես տեղյակ չեն եղել իրենց կուսակցի՝ Դավիթ Համբարձումյանի կոչից եւ պատրաստվում են առաջիկայում այն քննարկել, որից հետո միայն դիրքորոշում կհայտնեն: Հիշեցրինք, որ մի քանի օր առաջ Սերժ Սարգսյանը դատարանի բակում արդեն «անոնսել» էր իմպիչմենտի գործընթացում նոր

«Եթե իմպիչմենտի օրակարգով գեներացվի փողոցային հուժկու պայքար, նույնիսկ եթե այն չհասնի իր նպատակին, ապա այն հավելյալ լծակ է իրական ընդդիմության ձեռքում, որպեսզի զսպեն իշխանություններին՝ կեղծիքներ, խախտումներ անելը, որոնք իրենք միանշանակ անելու են: Ընտրությունների բարձր մասնակցությունը մեր քաղաքացիների կողմից կարեւորագույն կետերից է: Փաշինյանի ընտրողների թիվը ֆիքսված է, դա ադմինիստրատիվ ռեսուրսն է, իրենից ուղիղ ֆինանսական կամ այլ կախումներ ունեցող մարդիկ են եւ դեռեւս խաբված մեր քաղաքացիներն են: Դա ֆիքսված թիվ է, ո՛չ աճում է, ո՛չ նվազում: Հետեւաբար,

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԳՅՈՒՄՐԻՆ ՄԵՐԺՈՒՄ Է ՔՊ-ԻՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Առաջիկա խորհրդարանական ընտրությունները սարերի հետեւում չեն: Թեեւ առերեւույթ դեռ ժամանակ կա, սակայն քաղաքական ուժերն արդեն մտել են վերադասավորումների եւ քարոզարշավի փուլ: Անսպասելիորեն որոշ քաղաքական ուժեր հայտարարեցին ընտրություններին չմասնակցելու մասին, մի քանիսն էլ բավական անհավանական կոալիցիաներ կազմեցին: Մի մասը շարունակում է լռություն պահպանել՝ հաշվարկելով հնարավոր քաղաքական զարգացումները եւ հապաղելով:

«Հայրենիք» կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանն օրերս հայտարարեց ընտրություններին չմասնակցելու մասին՝ պատճառաբանելով, թե չեն ցանկանում իրենց մասնակցությամբ փոշիացնել ընդդիմության ձայները: Նա նաեւ ընտրողներին առաջարկեց ակտիվ լինել եւ իրենց ձայնը տալ նախընտրած քաղաքական ուժին:

Մեր տեղեկություններով՝ Արթուր Վանեցյանի թիմակից՝ «Պատիվ ունեմ» դաշինքով Շիրակի մարզից պատգամավոր ընտրված, ապա ավագանու ընտրություններում հաղթանակ տարած Մարտուն Գրիգորյանն ընտրություններին պատրաստվում է մասնակցել՝ համագործակցելով Գագիկ Ծառուկյանի հետ: Ի դեպ, այդ զարգացումը կարող է անակնկալի բերել ոչ միայն Գյումրու բնակիչներին, այլեւ ընդդիմադիր քաղաքական դաշտին: Մարտուն Գրիգորյանը քաղաքում ունի զգալի ընտրազանգված եւ հեղինակություն: Ի դեպ, նա ԱԺ պատգամավոր է եղել 2007-ի ընտրությունների արդյունքում, իսկ 2009-ին դարձել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ: Նա մինչեւ 2015 թվականը եղել է ԲՀԿ անդամ եւ ղեկավարել է կուսակցության Շիրակի մարզային խորհուրդը: Կուսակցությունից դուրս գալու պահին էլ հայտարարել է. «Ես դուրս եմ գալիս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շարքերից՝ պահպանելով ընկերական հարաբերություններ Գագիկ Ծառուկյանի եւ ԲՀԿ-ական գործընկերներիս հետ»: Իսկ 2021-ին մտել է Սերժ Սարգսյանի եւ Արթուր Վանեցյանի «Պատիվ ունեմ» դաշինքի ցուցակ:

Միաժամանակ նշենք, որ Ծառուկյանի թիմակիցներն ու նրան հարող որոշ շրջանակներ քաղաքում արդեն իսկ ակտիվ աշխատանքներ են իրականացնում: Ըստ տեղեկությունների՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կամ «Առաջարկ Հայաստանին» նախաձեռնությունը, որով այժմ հանդես է գալիս Ծառուկյանը, Գյումրիում նոր դաշնակիցներ եւ թեկնածուներ ներգրավելու ծրագրեր ունի:

Այս պարագայում ուշագրավ է նաեւ քաղաքապետ Վարդան Ղուկասյանի թիմակիցների դիրքորոշումը: Թեեւ Ղուկասյանը կալանավորված է, եւ նրա մերձավորները, թիմակիցները դեռեւս չեն հայտարարել ընտրություններին մասնակցելու մասին, սակայն հայտնի է, որ նրանց հաճախ դիտարկում են որպես ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի առաջնորդած «Հայաստան» դաշինքին հարող ուժ, եւ հնարավոր է քոչարյանական ուժի հետ համագործակցությունը նաեւ հունիսի 7-ի ընտրություններում: Չի բացառվում, որ Ղուկասյանի թիմի որոշ ներկայացուցիչներ միանան այդ քաղաքական ձեւաչափին, անգամ եթե նա շարունակի մնալ բանտում:

Իսկ ահա նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի թիմակիցները թեեւ ընդհատակում են եւ քաղաքական դաշտում բավական պասիվ, այնուամենայնիվ, տեղեկություններ կան, որ նրանցից մի քանիսն այս օրերին փորձել է բանակցություններ վարել տարբեր քաղաքական ուժերի, այդ թվում՝ Սամվել Կարապետյանի նորաստեղծ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների հետ: Նկատենք, որ, ընդհանուր առմամբ, Գյումրու քաղաքական դաշտում եւս վերադասավորումներ են ընթանում, եւ տարբեր անձինք ու ուժեր փորձում

են դիրքավորվել առաջիկա ընտրական գործընթացին ընդառաջ:

Այն, որ այս ընտրությունները լինելու են առանձնահատուկ, միանշանակ է: Քաղաքական գնահատականների համաձայն՝ Գյումրիում ներկայում քննարկվող թեկնածուները հիմնականում նախկին քաղաքական կառույցների հետ կապ ունեցող եւ որոշակի ռեսուրսներ տնօրինող անձինք են, եւ ընդդիմադիր դաշտի համախմբման դեպքում իշխանության հաղթելու հնարավորությունները նվազ են լինելու: Մանավանդ գյումրեցիների, Գյումրու քաղաքապետի եւ Շիրակի թեմի առաջնորդի նկատմամբ ՔՊ-ի եւ ուժայինների կիրառած տեռորի արդյունքում մարդիկ հակված են աջակցել ընդդիմությանը:

Արեւիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ՕՐԻՆԵՐԳ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ԱՅՍ ՀԱՐՑՈՒՄ ԷԼ ԱՄՆ-ԻՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԵԼ

«Օրիներգի կատարումը պարտադիր է դարձրել պետական միջոցառումների ժամանակ օրիներգի կենդանի կատարումը, եւ սա նշանակում է, որ ցանկացած միջոցառում, որը պլանավորվում է պետական կառույցների կողմից, առավել եւս՝ արարողակարգային միջոցառումների դեպքում, պետք է նախապես պլանավորել եւ ապահովել օրիներգի կենդանի կատարման հնարավորությունը»,- ասել է նախարարը՝ ուշադրություն հրավիրելով նաեւ ուսումնական հաստատություններում օրիներգի կատարման կարգի վրա, քանի որ օրենքում սահմանվել է, որ մանկապարտեզներում, դպրոցներում եւ քոլեջներում ուսումնական շաբաթվա սկզբին օրիներգ պետք է հնչի: «Օրիներգի կատարման կարգով հստակեցվում է, որ օրիներգը պետք է կատարվի հաստատության սաների կենդանի ձայնակցությամբ, այսինքն՝ մենք պարտադիր ենք դարձնում, որպեսզի օրիներգի կատարումը ներառի նաեւ բոլոր անձանց, ովքեր ներգրավված են»,- ասել նա՝ հավելելով, որ օրիներգի տարբերակները հրապարակված են կառավարության կայքում, «Հայաստան» բաժնում հասանելի են ձայնագրության 6 տարբերակները: Ինչ վերաբերում է ունկնդիրներին, ապա նրանք պետք է օրիներգի կատարման ժամանակ լինեն հոտնկայս՝ աջ ձեռքը կրծքին դրած:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ նույն օրը ընդգծել է՝ բոլոր միջոցառումներին, որտեղ պետք է հնչի ՀՀ օրիներգը, այն պետք է հնչի կենդանի կատարմամբ: «Մի շարք գերատեսչություններ ունեն նվագախմբեր, երգչախմբեր, նրանք, ովքեր չունեն նվագախմբեր կամ երգչախմբեր, թող հրավիրեն նվագախմբեր եւ երգչախմբեր, որպեսզի դա կատարեն»,- ասել է նա: Փաշինյանը պարզաբանել է՝ ինչ վերաբերում է այլ կառույցներին, այս դեպքում ստանդարտ է սահմանվում, այսինքն՝ պետք է միացվի այն ձայնագրությունը, որը պետական ստանդարտով սահմանված է, տեղադրված է պաշտոնական կայքում: Դրանից դուրս օրիներգի տարբերակներ միացնելն արգելվում է: Այս համատեքստում Փաշինյանը հիշեց նաեւ 7 տարի առաջ տեղի ունեցած՝ պետական դրոշի հետ կապված դեպքը, երբ գետնին դրված դրոշի համար ՊԵԿ աշխատակցին աշխատանքից ազատեց, ապա որոշ ժամանակ հետո կարգադրեց հետ ընդունել: Ասել էր, որ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում եւս փոփոխություններ են կատարվել՝ պետական դրոշի հետ կապված վարվեցողության կանոնները խախտելու համար: «Երբ հնչում է օրիներգը, դա առանձնահատուկ իրադարձություն է: Էական չէ, թե որտեղ է հնչում, ինչ առիթով է հնչում»,- ասել է Փաշինյանը՝ նշելով, որ պետք է խնդրել նաեւ Հանրային հեռուստաընկերությանը՝ փոխել ՀՀ օրիներգի «հնամաշ» հոլովակը:

Այսինքն, ինչքան երկրի ինքնիշխանությունն իջնում է, ինչքան շատ են մեր թշնամի երկրների ղեկավարները տրորում մեր արժանապատվությունը եւ մեր հասցեին վայրահաչում, այնքան ձեւական արարողակարգային էժան տրյուկներով այս իշխանությունը փորձում է ցույց տալ, թե հարգում է մեր պետության սիմվոլները՝ օրիներգի նոր կարգ է ընդունում, դրոշներ է տեղադրում այստեղ-այնտեղ:

Վերջին շրջանում մարդիկ նկատում են նաեւ, որ օրիներգի ժամանակ ՔՊ-ականները շարքով կանգնում են ու ձեռքները դնում կրծքին՝ սրտի մասում, ինչն իբրեւ թե հարգանք է երկրի հիմնի նկատմամբ, այլ երկրներից ընդօրինակված: Լավ կլիներ, որ այլ երկրներից նաեւ պետություն պահելու, արժանապատվություն ունենալու, թշնամու առաջ գլուխ չխոնարհելու մյուս որակներն ընդօրինակեին:

Իշխանության եկած օրվանից պետության սիմվոլներն ու պետության հանդեպ հարգանքը խարխլած ՔՊական իշխանությունը չի գիտակցում, որ երբ Արարատ սարի դեմ է պայքարում, երբ ասում է՝ Արեւմտյան Հայաստանը Թալինն է ու Արմավիրը, իսկ Արցախը երբեք մերը չի եղել, պետության հանդեպ հարգանքը ոչնչացնում է, նրա ատրիբուտները հողին է հավասարեցնում: Երբ հայկական եկեղեցու դեմ է պայքարում, մեր ազգի հիմքերին ու ազգային արժեքներին է հարվածում: Իսկ այդ դերասանությունը՝ ձեռքը կրծքին դնելը, առնվազն ծիծաղ է առաջացնում:

ՀՀ երրորդ նախագահի արարողակարգի պատասխանատու **Արմեն Գիչյանին** «Հրապարակը» հարցրեց՝ արարողակարգի տեսանկյունից որքանո՞վ է այդ ժեստն անհրաժեշտ, ո՞րն է դրա նպատակը: Գիչյանն ասաց. «Անկեղծ ասած, ինձ էլ հետաքրքրեց, թե ինչու են օրիներգի ժամանակ ձեռքը սրտին դնում, ես հետաքրքրվեցի, պարզվեց՝ համապատասխան որոշում է կայացվել, կարծես հենց կառավարության կողմից, որ պետք է պետական օրիներգի կատարման ժամանակ ձեռքը դնել կրծքին՝ սրտի մոտ: Կա համապատասխան որոշում: Որոշման մեջ նաեւ ասվում է, որ պետք է օրիներգը հնչի ակապելլա կամ լայվ, միեւնույն ժամանակ ձեռքը պետք է դրվի սրտին: Դե, ամեն դեպքում, ճաշակին ընկեր չկա, չեմ կարող հստակ ասել՝ գեղեցի՞կ է այն նայվում, թե՞ ոչ, ամեն դեպքում, կան էլի որոշ երկրներ, որտեղ պետական միջոցառումների ժամանակ, երբ հնչում է պետության օրիներգը, ձեռքն անպայման պետք է տանել դեպի սիրտը: Պետական օրիներգի հանդեպ եթե կա հարգանք, անկախ այն բանից՝ այն կենդանի կատարումով է հնչում, թե ոչ, հարգանքն առաջին հերթին ոտքի կանգնելն է՝ հստակ կեցվածքով, առանց ձեռքերը խաչելու կամ այս ու այն կողմ տանելու: Զինվորականներն օրիներգի ժամանակ պատվի էին առնում, իսկ այս որոշումը նոր բան է, մեկ ամիս առաջ է ուժի մեջ մտել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԵՐԿԱ ՊԱՀԻՆ ՉԵՆ ՎԱԽԵՆՈՒՄ՝ ԿՐԱԿՈՑՆԵՐ ՉԿԱՆ, ԲԱՅՑ ՄԱՐԴ ԵՆ, ԷԼԻ...

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքներում ոչ միայն բնակիչների թիվն է պակասել, այլեւ՝ խոշոր եւ մանր եղջերավոր անասունների գլխաքանակը: Վերին եւ Ներքին Շորժաներում էլ ձմռանն առհասարակ մարդ չի բնակվում: Գրավոր հարցում էինք ուղարկել Վարդենիսի համայնքապետարան, թե մինչեւ 2020 թվականը Վերին եւ Ներքին Շորժաներում որքան բնակիչ է մշտական կամ ժամանակավորապես բնակվել, որքան խոշոր եւ մանր եղջերավորներ են հաշվառված եղել, եւ գյուղատնտեսական նշանակության որքան հողեր են մշակվել: Խնդրել էինք նույն տեղեկատվությունը հաղորդել նաեւ 2025 թվականի կտրվածքով:

Համայնքապետարանից մեզ պատասխանել են, որ Վերին Շորժա բնակավայրում 2020 թվականին բնակվել է 28 տնտեսություն, որից 5-ը՝ մշտական, 2025 թվականին ժամանակավոր բնակվել է 25 տնտեսություն: 2020-ին մշակվել է 180 հա ցանքատարածություն, 2025-ին՝ 85 հա: 2020-ին անասնագլխաքանակը կազմել է 308 խոշոր եւ 630 մանր եղջերավոր, 2025-ին՝ 137 խոշոր եւ 290 մանր եղջերավոր անասուն:

Ներքին Շորժա բնակավայրում 2020 թվականին ժամանակավոր բնակվել է 15 տնտեսություն, 2025-ին՝ 11: 2020-ին մշակվել է 60 հա ցանքատարածություն, 2025-ին՝ 150 հա: 2020-ին անասնագլխաքանակը կազմել է 230, 2025-ին՝ 170 խոշոր եղջերավոր:

Խնդրել էիք հստակ ասել, թե Վարդենիս համայնքի սահմանամերձ գյուղերից քանի հեկտար գյուղատնտեսական հողեր եւ արոտավայրեր են անցել ադրբեջանցիների հսկողության տակ, եւ այդ տարածքներից արդյոք օգտվո՞ւմ են բնակիչները: «Ինչ վերաբերում է գյուղատնտեսական նշանակության հողերի եւ արոտավայրերի՝ դիտարկման տակ գտնվելուն, խնդրում ենք տեղեկատվության համար դիմել համապատասխան մարմիններին»,- պատասխանել են մեզ՝ հրաժարվելով հստակ տեղեկատվություն տրամադրելուց, քանի որ իշխանությունը գաղտնի է պահում այդ տվյալները:

Այն, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի սահմանամերձ գյուղերում որոշ արոտավայրեր եւ գյուղատնտեսական նշանակության հողեր անցել են ադրբեջանական վերահսկողության տակ, եւ գյուղացիները վախենում են օգտվել այդ տարածքներից, որի արդյունքում նաեւ անասնագլխաքանակն է պակասել, փաստում են նաեւ համայնքապետարանի կողմից տրամադրված մյուս թվերը:

Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ **Էդգար Գեւորգյանից** հետաքրքրվեցինք, թե ինչու են Վերին եւ Ներքին Շորժաներում անասնագլխաքանակը եւ ցանքատարածքները պակասել: «Եկամտաբերությունը ցածր է՝ անասուն պահելու, դրանից էլ անասուն չեն պահում, գնում են Երեւան, շինարարության վրա են աշխատում: Բնականաբար, Վարդենիսը հեռու է Երեւանից, ամեն օր չեն կարող գնալ-գալ: Գնում են, տուն վարձում, մնում, աշխատում»:

Այդ համայնքներում մարդկանց հիմնական եկամուտը եղել են գյուղատնտեսությունն ու անասնապահությունը, հարցրինք՝ հիմա անասնապահությունը եկամուտ չի՞ բերում, եթե հաշվի առնենք, որ տավարի մսի գինը բարձրացել է՝ նվազագույնը 3500-3800 դրամ է վաճառվում: «Եկամտաբեր չէ, քիչ եկամուտ է բերում: Արոտավայրերը բավականացնում են անասուններին արածեցնելու համար: Էնտեղ կան դիտարկվող տարածքներ, որոնք որ դիտարկվում են»: Դիտարկվող տարածք ասելով նկատի ունեն, որ թշնամին բարձրադիր դիրքեր ունի, որտեղից տեսանելի են այս արոտավայրերը: Այսինքն, գյուղացիները վախենո՞ւմ են այդ տարածքներում անասուններ արածեցնել: «Ներկա պահին չեն վախենում, կրակոցներ չկան, բայց մարդ են, էլի..»: Իսկ ցանքատարածքների հետ կապված՝ ի՞նչ կասեք: «Հիմա բուսաբուծության աջակցության ծրագիր կա մարզում, ահագին աշնանացանի ավելացած տարածքներ ունենք մարզում: 14 հազար 772 հա աշնանացան ցորեն՝ 2025 թվականին ցանված, 2026 թվականին բերքի տակ ընկած: Նախորդ տարվա վրա մենք ունենք 4 հազար 476,1 հա ավել ցանք: Հիմնականում Վարդենիսի տարածաշրջանում են ցանում»,- պատասխանեց Գեւորգյանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՅՑ

ԻՆՉՈՒ Է ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽՈՒՃԱՊԱՀԱՐ ՎԱԶԵԼ ՎՐԱՍՏԱՆ

Մարտի 3-ին հայտնի դարձավ, որ Փաշինյանն աշխատանքային այցով անսպասելի մեկնել է Վրաստան, որտեղ հանդիպելու է այդ երկրի վարչապետ Իրակլի Կոբախիձեի հետ: Նույնիսկ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի ընտանեկան կայքն այս լուրը հաղորդեց այնքան ուշ, որ հայկական այլ լրատվամիջոցներ տեղեկությունը տարածել էին՝ հղում անելով վրացական աղբյուրներին: Նշանակում է՝ այցը չի եղել նախապես պլանավորված, այլ խիստ հապճեպ է: Փաշինյանը Վրաստան է մեկնել Հայաստանի տոտալ շրջափակումը կանխելու համար: Մի մարդ, որը մինչեւ վերջերս խոսում էր Հայաստանն իբրեւ թե խաղաղության խաչմերուկի վերածելու մասին, իր քաղաքականության եւ աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում երկիրը վերածել է խուլ փակուղու:

Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունը՝ լեզու գտնել հարեւան Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ, որ նրանք բացեն Հայաստանի հետ սահմանը, եւ Հայաստանը դուրս գա կիսաշրջափակումից, որեւէ արդյունքի այդպես էլ չհանգեցրեց: Արդեն հինգերորդ տարին է՝ Փաշինյանը խոսում է Թուրքիայից եկող դրական ազդակների մասին, ընդամենը վերջերս՝ անցած տարվա օգոստոսին, Փարիզում հայտարարում էր, որ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատելու եւ սահմանը բացելու հարցում որեւէ խոչընդոտ չկա. «Ես հավատում եմ, որ այդ պահը մոտենում է եւ այդ պահը կգա շուտով, բայց թե ստույգ երբ՝ ես չեմ կարող ասել հիմա»:

Տեսականորեն, իհարկե, ոչինչ չի կարելի բացառել, այդ թվում եւ հայ-թուրքական սահմանի բացումը, բայց դրա հավանականությունն ավելի մեծ չէ, քան Մարսի վրա երկրորդ հայկական պետություն կառուցելու հավանականությունը, որը նույնպես տեսականորեն հնարավոր է, բայց թե գործնականում կլինի, թե ոչ՝ որեւէ մեկը չի կարող ասել: Ադրբեջանը սահմանափակ հնարավորություն է տալիս՝ ինչ-որ բեռներ տեղափոխել Հայաստան, բայց դա Հայաստանի բեռնափոխադրման ծավալի չնչին, աննշան մասն է: Չկարողանալով հարաբերությունները բարելավել Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ՝ Փաշինյանը վատթարացրել է հարաբերությունները Վրաստանի հետ:

Վրաստանն այլեւս Հայաստանի Հանրապետությունը չի ընկալում որպես անկախ պետություն. հայ բեռնափոխադրողներն իրենց ապրանքը Վրաստանի տարածքով տեղափոխելու համար ստիպված են լինում դիմել տարբեր կրիմինալ կառույցների, ստիպված են լինում դրա համար հավելյալ գումար վճարել: Պատճառն այն է, որ Հայաստանի իշխանությունը չի կարողանում Վրաստանի իշխանության հետ պայմանավորվել, որ Հայաստանի բեռնափոխադրումներն իրականացվեն օրենսդրությամբ եւ միջպետական համաձայնագրերով ֆիքսված պայմաններով: Վրացիները երեւի համարում են, որ Հայաստանը որպես պետություն լուծարվել է, ինչի արդյունքում լուծարվել են նաեւ այդ միջպետական պայմանագրերը:

Հայաստանի էկոնոմիկայի նախարար աշխատող Գեւորգ Պապոյանին հարց են տալիս, թե մինչեւ երբ հայ բեռնափոխադրողները պետք է հավելյալ գումար վճարեն՝ իրենց ապրանքը Վրաստանի տարածքով անցկացնելու համար, նա պատասխանում է, որ բեռնափոխադրողներն իրավապահ մարմիններին նման տեղեկություն չեն փոխանցում: Պատկերացնում եք, չէ՞, որ մարդ առնվազն Գեւորգ Պապոյան պետք է լինի, որ նման բան հայտարարի: Ինչ կլինի այն հայ բեռնափոխադրողի հետ, որը Հայաստանի քննչական կոմիտեի որեւէ քննիչի կասի, որ ինքը Վրաստանի տարածքով անցնելու համար որեւէ քրեական հեղինակության կամ նրա կողմից նշանակված անձի վճարում է 500 կամ 1000 դոլար, որ կարողանա անցնել այդ երկրի տարածքով: Իհարկե, նա այլեւս երբեք հնարավորություն չի ունենա Վրաստանի տարածքով բեռնափոխադրում իրականացնել: Կամ՝ ի՞նչ կարող է անել Հայաստանի քննչական կոմիտեն Վրաստանի տարածքում, բացարձակապես ոչ մի բան: Այդ դեպքում ինչո՞ւ են մարդկանց ստիպում վրացիների վրա գործ տալ, միայն այն պատճառով, որ արդարացնեն իրենց անգործությունը, իրենց անմեղսունակությունը: Նրանք գիտեն, չէ՞, որ ոչ մի հայ բեռնափոխադրող նման անիմաստ եւ գործին օգուտ չտվող քայլի չի գնա՝ ինքն իր ոտքին չի կրակի:

Իրանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններն էլ ավելի են սրել Հայաստանի շրջափակումը, իրանական նավահանգիստները փակվել են հայ բեռնափոխադրողների համար, եւ դժվար է ասել՝ առաջիկայում դրանք կբացվե՞ն կամ ե՞րբ կբացվեն: Հայաստանի տնտեսությունը մնացել է Վրաստանով անցնող ճանապարհի հույսին, որը ցանկացած պահի կարող է փակվել կամ դառնալ ավելի դժվարանցանելի: Եթե առջեւում նախընտրական վիճակ չլիներ, Փաշինյանը կարող էր եւ չանհանգստանալ. իրեն ու իր ընտանիքին անհրաժեշտ ապրանքները հնարավոր կլիներ ստանալ նաեւ օդային ճանապարհով, մնացածը կարող են եւ չսնվել, չհագնվել կամ ընդհանրապես չապրել: Բայց քանի որ ընդամենը երեք ամիս հետո ընտրություններ են, ինքը պետք է ինչ-որ բան ձեռնարկի, որ չկորցնի իշխանությունը եւ չհայտնվի նրանց շարքում, ովքեր մնացել են բախտի քմահաճույքին:

Փաշինյանը մեկնել է Վրաստան, որ այդ երկրի իշխանության հետ պայմանավորվի, որ գոնե մինչեւ ընտրությունները նրանք հավելյալ խոչընդոտներ չստեղծեն Հայաստանի բեռնափոխադրողների համար, այլապես ինքը կհայտնվի չափազանց ծանր վիճակում, կկորցնի իշխանության մնալու անգամ ամենատեսական հնարավորությունը: Հիմա այնպիսի իրավիճակ է, որ Փաշինյանը ստիպված է սողալ նաեւ Վրաստանի իշխանության առաջ, նա այնքան թույլ եւ անպաշտպան վիճակում է, որ իր մնալ-չմնալու հարցը կախված է մազից, եւ այդ մազը կարող են կտրել շատերը, այդ թվում՝ նաեւ վրացիները:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

«ՍԵՐԸ ՍՈՒՏ Է, ՊԵՌԱՇԿԻ ԿԵՐԵՔ»

Մի ավտոբուս լիքը՝ Աննայի ընկերներն ու գաղափարակիցներն ուրախ-զվարթ շրջում են մարզերում, ոչինչ չի փոխվել աշխարհում՝ միայն այն պատճառով, որ վարչապետի դե յուրե չամուսնացած կինը հիմա էլ դե ֆակտո հեռացել է նրանից: Պատմությունն այսպես է պատահել. բարի փերիները, որ մոխրոտիկին ուղարկել էին դղյակ, ապահովել էին նրա համար ճոխ կյանք, մուշտակներ ու ատլասե զգեստներ՝ կարճ ու երկար, գեղեցիկ եւ տգեղ, բազմաթիվ զարդեր՝ իսկական եւ արհեստական, բոլորն էլ՝ թանկարժեք: Բայց զգուշացում կար՝ ընտրություններից առաջ, 100 օրը չլրացած, պետք է թողնես այդ ամենն ու հեռանաս դղյակից, եւ մեքենան կդառնա դդում, զգեստը՝ ջինս ու վադալազկա, եւ դու կլինես նորից մոխրոտիկ: Ինչ դաժան կյանքով է ապրել դղյակում մոխրոտը. նա աճպարարություն է արել, օրինակ՝ ստիպված է եղել կառավարական ամառանոցի այգում «բանջարեղեններ» աճեցնել եւ շրջափակման մեջ սովի մատնված արցախցիներին ակնարկով նախատել է, թե՝ բա դուք ինչի՞ չեք աճեցրել, որ հիմա էլ քաղցած եք մնացել: Դա աճպարարություն էր, քանի որ դիտողը կադրում ճանաչեց սուպերմարկետների թանկանոց, անգամ ներմուծված բանջարեղեն, բայց դե՝ մարդուն ստիպել են աճպարար լինել: Հետո նա հագնվել է տեղին եւ թեմային անհամապատասխան զգեստներ, երբեմն բացահայտ զգացվում էր, որ դրանք իրենը չեն, ուրիշինն են, հանելու է՝ հետ տա: Իսկ եթե վատն էին կերպարները, եւ նա երբեմն դարձել է ոչ միայն հայ հանրույթի ծաղրի առարկա եւ դրա համար ցավում է, ներողամտություն է հայցում՝ ավել-պակասի համար, ինչպես ասում են: Գնում է, սրտիկ չի անում, չի խաբում, թե բոլորին սիրում է, քանզի նման խոսքերին նա չի հավատում: Նա չի հավատում, մենք ինչո՞ւ պիտի հավատանք:

Եվ այսպես՝ Շառլ Պերոն չի երազել այսքան դաժան: Սա, անկասկած, սցենար է, որը գրել են հերոսի կեղծ պապիկի, օրը մեջ քովիդով հիվանդացող-լավացող վարչապետի, բանջարեղեններ աճեցնող, իսկ պատերազմի ժամանակ անագե տոկուն զինվորիկի նման ճակատամարտ մեկնող, գիրք կարդացող եւ բոլորին կրթող, ամուսնուն շատ սիրող, նրա հետ պերաշկի-կուկուռուզ ուտող առաջին տիկնոջ մասին հեքիաթների հեղինակները: Կա պահանջարկ՝ կա առաջարկ, նրանց թվացել է, թե ընտրողն այդ ամենին հավատում է:

Ընտրողը հեքիաթներին հավատացող փոքրիկ երեխա է, բայց նոր հեքիաթասացները ոչ մի նոր բան մտածել չեն կարողանում: Նրանք գողանում են հայտնի հեքիաթները, խառնում իրար՝ ստանում մի հետաքրքիր, զազրելի փունջ: Ահա՝ արքայազնը, իր փախած մոխրոտիկին փնտրելու փոխարեն, հավաքել է մի ավտոբուս լիքը՝ բոլոր հեքիաթների հերոսներին ու նրանց հետ շրջում է մարզերում, սիրում-սիրահետում է ընտրողներին՝ անկախ սեռից ու տարիքից: Բրեմենյան երաժիշտները հրճվում են. Тем, кто дружен, не страшны тревоги. Нам любые дороги дороги. Յե, յե-յե, յե-յե... Արքայազնը Կապույտ մորուքի հետ անսոխ պեռաշկի է վայելում, իսկ խոզուկն ու Նապաստակը չեն տխրում, չեն հիշում իրենց ընկերուհուն եւ գաղափարակցին, ընդհանրապես գոհ են եւ երջանիկ, որ նա չկա: Հիասթափված են քոմենթների հերոսները, մեկը գրում է. «Սերը սուտ է, պեռաշկի կերեք». ահա թե ինչ կցուցանի այդ առակը:

Սա տխուր պատմություն է, կա դրանում իրականություն, թե ոչ՝ անգամ կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ հեքիաթները, ընդհանրապես, արժեքներ են ձեւավորում, դաստիարակում են, իսկ այս խումբն ուղղակի ոտնակոխ է անում ամեն արժեք, այդ թվում՝ հայրենիքը, ընտանիքը, սերը եւ պարզ մարդկային հավատարմությունը՝ ընկերոջ, թե զուգընկերոջ նկատմամբ:

Ես սատարում եմ քույր Աննային, հավատում եմ, որ այդ դղյակից կարելի էր փախչել: Դա կարող էր լինել ամենաազնիվ քայլը, այն դեպքում, երբ դրան հաջորդող օրերին իր ընկերներն ամենեւին չեն տխրել, իսկ սիրառատ ամուսինը նոր կուկուռուզակեր ընկեր է գտել եւ ուտում է նույն ախորժակով: Հեքիաթները, ինչպիսին էլ լինեն, ավարտվում են նույն վերջաբանով. բարին հաղթում է, չարը՝ պարտվում: Երկնքից երեք խնձոր է ընկնում՝ իմաստնության խնձորներ, որոնք վերջաբանն են բոլոր, անգամ ամենաանտաղանդ հեքիաթների: Մեկը ձեզ՝ որ աճպարար եք եւ հեքիաթասաց: Կուտեք, կհասկանաք, որ միշտ կգտնվի մի երեխա, որը կգոռա՝ մերկ է թագավորը, եւ կփակի իր խանութի դուռը՝ չվախենալով Ալի Բաբայի 40 ավազակներից: Լավ է, որ նա դեռ ողջ է, դեռ նրան մարդակերները չեն կերել ու հպարտանում են այդ մեծ ձեռքբերմամբ: Կուտեք, կհասկանաք, որ նրան ուտել չարժե: Մյուս խնձորը՝ ընտրողին, որը դյուրահավատ է, երբեմն՝ անհավատ: Կուտի, կհասկանա, որ ամենակարեւորն աչքով չես տեսնի, պետք է սրտով հասկանալ, երբ քեզ անընդհատ խաբում են: Երրորդ խնձորն էլ՝ չարին հաղթող բարի հերոսին, որ ուտի ու հասկանա, որ սպանելով հրեշին՝ կարող են եւ հրեշ դառնալ, մինչդեռ հանրությունն արդեն հրեշներ տեսել է ու սպասում է փրկչին:



Այս պատմության մեջ բոլոր համընկնումները պատահական են, բոլոր նմանությունները՝ հեքիաթային, բացի կարկանդակից: Այն իրական է, թեեւ առանց սոխի՝ էլ ինչ իսկական պեռաշկի...

Շաքե ԱՎՈՅԱՆ

ԵՐԿՈՒ ԽՆԴԻՐ ԿԱ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԵՆ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԻՐԱՆԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Արա Պողոսյանն** է:*



- ԱՄՆ- և, Իսրայելը հարձակվել են Իրանի վրա. սպանվել են գերագույն հոգեւոր առաջնորդը, Պնախարարը, ռազմական էլիտայի այլ ներկայացուցիչներ: Նրանց արդեն նոր անձինք են փոխարինել: Թեհրանը, ի պատասխան, հակահարված է հասցնում ռեգիոնում ամերիկյան ռազմաբազաներին. ո՞ւր է տանում այս ամենը:

- Կարծում եմ, որ առկա է երեք հնարավոր սցենար, որոնցից յուրաքանչյուրը նույնքան գոյություն ունենալու իրավունք ունի: Առաջին սցենարը, որը, իմ կարծիքով, հնարավոր ամենալավ սցենարն է, այն է, որ երկրում նոր գերագույն առաջնորդի ընտրվելուց հետո կողմերի միջեւ անուղղակի շփումներ սկսվեն, եւ առաջին մի քանի օրերի ընթացքում կողմերը գնան բանակցություններ: Պահպանվեն երկրում կայունությունը, իշխանական համակարգի կենսունակությունը, եւ երկիրը գնա աստիճանական մոդեռնիզացիայի ճանապարհով: Սա այս պահին լավագույն սցենարն է: Մյուսը՝ եթե Իրանի նոր գերագույն հոգեւոր առաջնորդը եւ իշխող դասն առավել կոշտ դիրքորոշում որդեգրեն, եւ սկսվի ռազմական գործողությունների աշխարհագրության ընդլայնում: Ռազմական գործողությունների երկարումը կհանգեցնի Իրանի դեմ ԱՄՆ-ի կողմից կոալիցիայի ձեւավորման: Հնարավոր նման սցենարի դեպքում Իրանի հետ համագործակցող եւ կոալիցիա կազմող հիմնական դերակատարը Չինաստանը կլինի՝ ուղղակի կամ միջնորդավորված: Նման պարագայում սա կնմանվի Ֆրանց Ֆերդինանդի սպանությանը: Սա չափազանց ծանր ու վտանգավոր սցենար կլինի, որը կվերաբերի ոչ միայն տարածաշրջանում, այլեւ աշխարհում շատ երկրների ու ժողովուրդների: Եվ երրորդ սցենարը, եթե երկրում ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից հնարավոր լինի ներքին քաոս առաջացնել եւ գեներացնել իշխանության փոփոխություն: Սա ԱՄՆ-ի համար պլան մաքսիմումն է՝ վերադարձնել Իրանը նախահեղափոխական՝ 1979-ից առաջվա վիճակին: Սա ԱՄՆ-ի գլոբալ ազդեցության հաստատման համար անհետաձգելի առաջնայնություն ունեցող խնդիր է, որը պետք է արգելակի Չինաստանի աճող գլոբալ դերակատարման ընթացքը: Այս պարագայում էլ մենք դեռեւս չենք կարող պատկերացնել, թե հնարավոր ներքին անկայունությունները պատերազմի ընթացքում ինչ նոր գործոններ առաջ կբերեն, եւ դա ինչ ազդեցություն կունենա մասնավորապես Հայաստանի ու տարածաշրջանային անվտանգության միջավայրի վրա:

- Թրամփը պնդում է, թե իրանական կողմը կապ է հաստատել բանակցությունների համար, եւ ակնարկում, թե որ դեպքում կդադարեցնի հարվածել, իսկ Լարիջանին հակադարձում է, թե այդ ամենը սուտ է, եւ որ Իրանը ջախջախիչ հարված կհասցնի թշնամիներին: Ո՞ւմ հավատանք:

- Կարծում եմ՝ այստեղ գործ ունենք տեղեկատվական հարձակման հետ եւ երկու դեպքում էլ պետք է դիտարկենք զգուշությամբ: Քանի դեռ որոշակի չեն Իրանում քաղաքական վերադասավորումները, չեմ կարծում, թե անցումային խորհուրդը պատրաստ կլինի նման պատասխանատվություն ստանձնել, հատկապես հաշվի առնելով նախորդ երկու բանակցային փուլերի վերջաբանը:

- Թրամփը նշել է նաեւ, որ ռազմական գործողությունները 4-5 շաբաթ կշարունակվեն: Թուրքիան արդեն փակել է Իրանի հետ սահմանը: Իսկ ի՞նչ է սպառնում Հայաստանին, ի՞նչ պետք է անեն մեր իշխանությունները՝ կանխարգելիչ գործողություններից եւ արարողակարգային հանդիպումներից զատ, որի թվում Փաշինյանի մասնակցությամբ ԱԽ-ի նիստն էր:

- Բնականաբար, առաջին հերթին պետք է հասկանալ, թե ինչ է կատարվում: Խնդիրը պահանջում է համապարփակ վերլուծություն, թե հնարավոր ինչ ռիսկերի կարող ենք առնչվել: Թեպետ, լայն առումով, Հայաստանն այս պահին գործոն չէ, որից կախված է ինչոր բան, սակայն առնվազն երկու խնդիր կա, որոնք պետք է լուծեն Հայաստանի իշխանությունները՝ ներքին համերաշխության հաստատում եւ սահմանային անվտանգության ապահովում: Իրանում, Մերձավոր Արեւելքում եւ այլուր իրադարձությունները հուշում են, որ այն երկրները, որոնք չունեն ներհասարակական կոնֆլիկտ, ճգնաժամային իրավիճակները հեշտ են հաղթահարում, իսկ այն հասարակությունները, որտեղ կա ներքին լարվածություն, ճգնաժամային իրավիճակները ոչ միայն մեկ ուղղությամբ են ազդում, այլեւ հարակից ճգնաժամեր են առաջացնում:

Արա ԱԼՈՅԱՆ

Թուրք-ադրբեջանական ներդրումներ՝ 5 միլիարդից ավելի

Վրաստանի արեւելյան հատվածում գտնվող Ցինանդալի բնակավայրում տեղի է ունեցել վրաց-ադրբեջանա-թուրքական բիզնես ֆորում: Այն անցկացվում է՝ սկսած 2012 թվականից: Մասնակցել են Ադրբեջանի էկոնոմիկայի եւ Թուրքիայի առեւտրի նախարարները: Վրացական կոմից մասնակցել է էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարը: Ֆորումի ժամանակ արձանագրվել է, որ Վրաստանում գործում է թուրքական կապիտալով գործող 2 հազար 805 եւ ադրբեջանական կապիտալով գործող ավելի քան 1660 ընկերություն: Ադրբեջանական ներդրումների ծավալը վրացական տնտեսությունում կազմում է 3,1 միլիարդ դոլար, թուրքականը՝ 2,4 միլիարդ: Թբիլիսին կարեւորել է «Միջին միջանցքի» զարգացման հեռանկարները եւ նոր ներդրումների իրականացումը երկաթուղային տրանսպորտի, ավտոմայրուղիների կառուցման, նավահանգիստների եւ լոգիստիկ ենթակառուցվածքների ոլորտներում: Մինչեւ 2032 թվականը նախանշվել է, որ նմանատիպ նախագծերում կապիտալ ներդրումների ծավալը պետք է հասնի 7 միլիարդ դոլարի: Ռեգիոնում Հայաստան-Ադրբեջան եւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հնարավոր կարգավորման եւ ճանապարհների ապաշրջափակման, ինչպես նաեւ՝ «Թրամփի ուղու» հնարավոր գործարկման ֆոնին՝ հասկանալի է, որ Թբիլիսին անհանգստացած է եւ փորձում է ամեն բան անել՝ իր տարանցիկ գրավչությունը պահպանելու համար:

ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ

Ամերիկա-իսրայելա-իրանական ռազմական նոր բախումը, Ռահբար Ալի Խամենեիի եւ մի շարք բարձրաստիճան իրանցի զինվորականների ու քաղաքական գործիչների նահատակումն Իսլամական Հանրապետությունը դարձրել են գլոբալ քաղաքականության կենտրոն: Ինչպես գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը, «իրանական հարցը» ներկայիս փուլում ունի մի շարք շերտեր: Առաջին հերթին ներկա բախումը կապված է Վաշինգտոնի գլոբալ հավակնությունների հետ: Միացյալ Նահանգներ-Իսրայել դաշինքը, որոնք ձգտում են կամ կործանել, կամ թուլացնել Իսլամական Հանրապետությունը Իրանում, ի վիճակի են արմատապես փոխել ուժերի բալանսը Մերձավոր Արեւելքում, ռեգիոն, որն աշխարհի ամենից տուրբուլենտ շրջաններից է:

Իրանի ապամիջուկայնացման հեռանկարների քննարկումը հարցականի տակ է դնում, թե որքան պահանջված է այսօր միջուկային զսպումը եւ չի՞ հանդիսանում արդյոք «ուրանի զրոյական հարստացում» թեզիսը, որպես հարմար գործիք՝ ապագա հակառակորդին զինաթափելու համար: Այս համատեքստում չի կարելի մոռանալ Հարավային Կովկասի մասին: Բացի մշակութային, լեզվական եւ կրոնական կապերից, որոնք առկա են Իրանի եւ Հարավային Կովկասի միջեւ, Իսլամական Հանրապետությունն ունի, ընդհանուր առմամբ, 800 կմ ձգվածությամբ սահման Ադրբեջանի եւ Հայաստանի հետ: Չնայած Վրաստանն էլ Թեհրանի ուշադրության կենտրոնում է մշտապես եղել: Ու կարեւոր է հասկանալ, թե Մերձավոր Արեւելքում ներկա էսկալացիան որքանով կարող է հետեւանքներ թողնել Հարավային Կովկասի վրա:

Մի քանի օր, ներկայիս էսկալացիայից առաջ, Թեհրանում էր Հայաստանի Պնախարար Սուրեն Պապիկյանը: Որքան էլ որ խոսենք Երեւանի արեւմտամետ քաղաքական ընտրության մասին, պարզ է, որ Հայաստանի համար Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունները չափազանց կարեւոր են: Թեհրանը դիտարկվում է կամ գոնե մինչեւ վերջերս դիտարկվել էր որպես ռեգիոնալ որոշակի հավասարակշռող ուժ: Ամերիկա-իսրայելական այժմյան հարձակման ֆոնին էլ՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԽ նիստ է անցկացրել, որի հանրային հատվածում խոր ափսոսանք է հայտնել ողբերգական իրադարձությունների համար եւ ընդգծել, որ անհրաժեշտ է հնարավորինս շուտ վերականգնել խաղաղությունը: Գալով Ադրբեջանին՝ Մարկեդոնովն իր վերլուծականում նշել է, որ Իսրայելն ու Ադրբեջանն առաջին տարին չէ, որ ռազմավարական գործընկերներ են, եւ դա մշտապես նյարդայնացրել է իրանական ղեկավարությանը: Թեեւ պաշտոնապես Բաքուն շատ զուսպ է արտահայտվում, սակայն շատ հայ վերլուծաբաններ Մերձավորարեւելյան իրադրությունը մեկնաբանելիս չեն մոռանում նկատել, որ Բաքուն իրականում պաշտպանում է Իսրայելին: Բաքուն, սակայն, կոչ է արել հարգել պետությունների տարածքային ամբողջականությունը՝ համահունչ ՄԱԿ սկզբունքներին: Սա՝ այն դեպքում, երբ Ադրբեջանի նախագահը ոչ վաղ անցյալում շատ սկեպտիկ կերպով էր արտահայտվում միջազգային իրավունքի, ներառյալ՝ նաեւ ՄԱԿ արդյունավետ կամ ոչ արդյունավետ լինելու մասին:

Իրեն բավականին զուսպ է պահում նաեւ Վրաստանը, եւ դա հասկանալի է: Արեւմուտքի հետ Վրաստանի ներկայիս հարաբերություններն այնքան էլ լավ վիճակում չեն՝ ամենամեղմ գույներով եթե նկարագրենք: Սակայն Թբիլիսիում զգուշավոր են եւ Վաշինգտոնին քննադատելիս չափը չեն անցնում: Միաժամանակ, առիթը չեն էլ օգտագործում, որպեսզի ցուցադրականորեն ցույց տան, թե Վաշինգտոնի հետ միակամ են ու միախորհուրդ: Պարզ է մի բան. հարավկովկասյան եռյակին անհանգստացնում է էսկալացիայի շարունակականությունը, քանի որ դա նշանակելու է փախստականների հոսք: Բացի այդ, առանձնապես ուրախ չեն, որ հարցեր լուծելիս մեծ տերություններն ուժային միջամտության են դիմում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՌԻ

ԱՅԴ ԹՈՂԸ ԵԹԵ ԴԵԲԵԴԻ ՄԵՋ ԼՑՆԵԻՆ, ԼԻՃ ԿԳՈՅԱՆԱՐ, ԳՈՆԵ ՁՈՒԿ ԿԲՌՆԵԻՆՔ

Լոռու մայր գետը՝ Դեբեդը, որի երկարությունը 176 կմ է, Չիչխան, Փամբակ, Տանձուտ, Տաշիր, Չքնաղ, Գարգառ, Սեւաբերդ, Ուռուտ՝ 2 տասնյակից ավելի վտակներով, մեծ դեր ունի մարզի կյանքում: Այն միայն ջրի աղբյուր չէ, այլեւ Լոռվա բնաշխարհի ողնաշարը, հենասյունը, կյանքի աղբյուրը: Սակայն Դեբեդի շուրջ ցավոտ խնդիրներ են կուտակված, եւ վերջին 7-8 տարիներին դրանց լուծման ուղղությամբ որեւէ ծրագիր չի նախաձեռնվել եւ չի իրականացվել: Տեսնենք, թե ինչ խնդիրների մասին է խոսքը, եւ ինչ է արվել մինչեւ 2018 թվականը:

Լոռիում շատերը հիշում են ՏԱՍԻՍ անվամբ ծրագիրը՝ TACIS (Technical Assistance to the Commonwealth of Independent States)՝ Եվրոպական Միության աջակցությամբ, որը գործեց մինչեւ 2006 թվականը: Նպատակն էր՝ աջակցել հետխորհրդային երկրներին, այդ թվում՝ Հայաստանին, Վրաստանին եւ Ադրբեջանին, ինստիտուցիոնալ բարեփոխումների, շուկայի, տնտեսության եւ պետական կառավարման ոլորտներում: 2007-ից այն փոխարինվեց European Neighbourhood and Partnership Instrument-ով: Երկու ծրագրում էլ ջրային ոլորտը համարվում էր առաջնահերթ ուղղություն: Խոսվում էր ինտեգրված ջրային ռեսուրսների կառավարման մասին, ավազանային կառավարման սկզբունքների ներդրման, ջրի որակի մոնիթորինգի բարելավման, ազգային օրենսդրության՝ եվրոպական մոտեցումներին համապատասխանեցման մասին: Նշվում էր սահմանամերձ գետերի համատեղ կառավարման փորձագիտական աջակցությունը, Քուռ եւ Արաքս գետերի ավազանների միասնական կառավարման անհրաժեշտությունը, տվյալների հավաքագրման մեթոդաբանության միասնականացումը, երեք երկրների մասնագետների սեմինարները:

Ես անձամբ ներկա եմ եղել այդ ծրագրերի քննարկմանը: Եվրոպացի փորձագետները փառահեղ մտքեր էին հնչեցնում, մեր պաշտոնյաները հետ չէին մնում: Իսկ ի՞նչ իրական ազդեցություն ունեցան այդ ծրագրերը Դեբեդի վրա՝ չնչին: Դեռ այն ժամանակ քննարկումներին մասնակցող մարզպետարանի մասնագետին հարցի՝ արդյո՞ք այս ծրագրերը կհանգեցնեն լիարժեք ջրային կառավարման համակարգի ստեղծմանը: Պատասխանեց. «Շատ ոգեւորվելու հարկ չկա: Լավագույնը, որ ստացվում է, երեք երկրների մասնագետների համար սեմինարներ ու լրագրողների համար բրիֆինգներ կազմակերպելն է: Ծրագիրը աղմուկ է, ուրիշ ոչինչ: Չի հանգեցնելու լիարժեք համակարգի ստեղծմանը: Իսկ այն գումարը, որ ծախսվում է ծրագրերի վրա, եթե Դեբեդի առաջ լցնեին, հոսքը կկանգներ, մեծ լիճ կառաջանար, ու մեր քաղաքացիները գոնե ձուկ բռնելու հնարավորություն կունենային»: Տարիները ցույց տվեցին, որ այս կանխատեսումն իրականությունից հեռու չէր:

Դեբեդի հիմնախնդիրների մասին զրուցեցի Լոռու մարզպետարանի աշխատակազմի նախկին աշխատակից, գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության առաջատար մասնագետ Վարդան Մալաքյանի հետ: Նա պատմեց, որ հետագայում գործարկվել է եւս մեկ տարածաշրջանային նախաձեռնություն՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության՝ United States Agency for International Development (USAID) եւ ամերիկյան Development Alternatives Inc. (DAI) կազմակերպության համագործակցությամբ: «Ջրային ռեսուրսների կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում ընտրվել էր Հարավային Կովկասի ամենախոշոր Քուռ գետը, որի ավազանում ապրում է շուրջ 6,8 միլիոն մարդ: Հասկանալի էր հետաքրքրվածությունը. Քուռ-Արաքս գետերի ջրային ռեսուրսները կենսական նշանակություն ունեն 3 հանրապետությունների զարգացման համար: Եվ էկոհամակարգի պահպանության համար անհրաժեշտ են միասնական մոտեցումներ՝ ջրի օգտագործման, պաշտպանության, մոնիթորինգի եւ տեղեկատվության փոխանակման ոլորտներում: Ծրագիրը ներառում էր 5 գործողություն: Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ցուցադրական տարածքներ ընտրվեցին Դեբեդ եւ Խրամի գետերի ավազանները: Ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթում հայկական կողմից հաղթող ճանաչվեցին «ՋԻՆՋ» ինժեներախորհրդատվական ընկերությունը եւ «Շրջակա միջավայրի պահպանության իրավաբանական կենտրոն» ՀԿ-ն, վրացական կողմից՝ «ՕՐԻԳՈ» խորհրդատվական ընկերությունը եւ «Փոքր քաղաք» ՀԿ-ն:

Թբիլիսիում հանդիպում եղավ՝ 3 երկրների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հիմնադրեցին «Քուռ-Արաքս» կոալիցիան, որի նախաձեռնությամբ հունիսի 2-ը հայտարարվեց եւ նշվում էր որպես Քուռ-Արաքս գետերի պաշտպանության օր: Փաստաթղթեր կազմվեցին, համապարփակ պլան մշակվեց: Քննարկումներ ու հանրային լսումներ անցկացվեցին: Գինեձոներ, կոֆե-բրիֆինգներ, լրագրողներին նվերներ՝ գրիչ, թղթապանակ, տպագիր նյութեր: Ծախսված գումարով մի երկրորդ լիճը կստեղծեին Դեբեդի մեջ, որտեղ լող կտային ոսկեփորիկ ձկները:

Մինչդեռ խորհրդային տարիներին Դեբեդի ավազանը զարգացած արդյունաբերական եւ գյուղատնտեսական տարածք էր: Արտադրական կեղտաջրերը, պարարտանյութերը, թունաքիմիկատները տարիներ շարունակ աղտոտել են գետի ջրերը՝ հարվածելով կենսաբազմազանությանը: Այսօր Ալավերդու «Էյ Սի Փի» ձեռնարկությունը եւ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատն աշխատում են ոչ լրիվ հզորությամբ, բայց նաեւ չունեն կեղտաջրերի լիարժեք մաքրման կայաններ: Արտադրական թափոնները շարունակվում են թափվել Դեբեդ: Բնապահպանական մոնիտորինգի տվյալներով՝ կախված մասնիկների, հիդրոկարբոնատի, քլորի, կալցիումի, սուլֆատների, նատրիումի եւ կալիումի պարունակությունը զգալիորեն աճել է: Թեեւ ծանր մետաղների կոնցենտրացիան էական փոփոխության չի ենթարկվել: Գետավազանի գրեթե բոլոր քաղաքներում ժամանակին կային կոյուղու մաքրման կայաններ: Այսօր դրանք քայքայված են կամ չեն գործում: Կենցաղային կեղտաջրերն առանց մաքրման թափվում են բաց ջրային համակարգեր՝ ստեղծելով ոչ միայն բնապահպանական, այլեւ համաճարակային ռիսկեր:

Վանաձորի մեծ մաքրման կայանը, որը երկրաշարժից հետո մոտ 80 տոկոսով պատրաստ էր, կարող էր լուծել այդ հարցը, սակայն ավարտին չհասցվեց, տարիների ընթացքում լքվեց, թալանվեց ու քանդվեց: Դա պարզապես կորցրած հնարավորություն էր: Չնայած Լոռին Հայաստանի ամենաջրառատ մարզերից է, բայց գյուղական համայնքներում ջուրը հասանելի է օրական մի քանի ժամով: Ցանցերը մաշված են, վթարները՝ հաճախակի, ջրի կորուստները՝ մեծ: Ոռոգման համակարգերը ձեւական են գործում: Ծաթեր գյուղում իմ մի մոտիկ ընկեր անցյալ ջրոռոգման շրջանում ինձ բողոքում էր. «Գյուղացին հաճախ չի կարողանում լիարժեք ոռոգել իր հողը: Սակագները բարձր են, ծառայության որակը՝ կասկածելի»: Լոռու մայր ջրատարը հաճախ ջրերը չի հասցնում կամ մասամբ է հասցնում «վերջնագծի» գյուղեր՝ Այգեհատ, Օձուն: Փոքր ՀԷԿ-երի կառուցումը չի ուղեկցվել բնապահպանական հաշվարկներով: Դեբեդի վրա գործող ՀԷԿ-երից են՝ Ձորագետ ՀԷԿ-ը, Շնող ՀԷԿ-ը, Թումանյան ՀԷԿ-ը, Դեբեդ-1 եւ Դեբեդ-2 ՀԷԿ-երը: Դեբեդի խոշոր վտակների՝ Ձորագետի, Փամբակի, Մարցի վրա նույնպես մի քանի փոքր ՀԷԿ կա:

Դեբեդի գետավազանը նաեւ սելավավտանգ տարածք է: Վերջին վարարումները մեծ վնաս հասցրին բնակավայրերին, գյուղատնտեսությանը, ճանապարհներին: Համատարած ծառահատումները նոր սելավների, էրոզիայի եւ սողանքների պատճառ են դարձել: Նախանցյալ տարի ափերից ելած գետը մեծ ավերածություններ գործեց՝ Փամբակ գյուղից սկսած, Ալավերդուց մինչեւ Բագրատաշեն: Գետերի հուները, կամուրջների անցումները լցված են սելավի բերածով ու կենցաղային թափոններով: Հակասելավային աշխատանքներ վերջին տարիներին գրեթե չեն կատարվել: Աղբավայրերը դուրս են մնացել վերահսկողությունից: Ֆիլտրացիոն կեղտաջրերն աղտոտում են ստորերկրյա եւ մակերեւութային ջրերը: Գետավազանի համապարփակ պլան կազմվել է, քննարկվել ու համաձայնեցվել է, բայց թղթի վրա կարող է մնալ, քանի որ բացակայում է քաղաքական կամքը: Ջրի կառավարումը միայն տեխնիկական խնդիր չէ՝ պատասխանատվության, ռազմավարության, պետական մտածողության հարց է:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԻՆՉ Է «ՍՈՎՈՐԵՑՐԵԼ» ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆՆ ԱՆԴՐԵՅ ԲԵԼԻԻՆ

Հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը մշտապես եղել է օտարազգի մշակույթի եւ արվեստի գործիչների ուշադրության կենտրոնում: Պատահական չէ, որ նրա մասին հետաքրքիր հուշեր, տպավորություններ, զրույցներ կարելի է գտնել բազմաթիվ օտարազգի արվեստագետների, գրողների, կոմպոզիտորների, նկարիչների հուշերում: Ահա դրանցից մեկը:

1928-ի մայիսին Երեւան է ժամանում Անդրեյ Բելին: Հետեւում Թիֆլիսն էր ու անցած երկար ճանապարհը: Առջեւում Էջմիածինն ու Արարատն էին եւ, իհարկե՝ հանդիպումը Մարտիրոս Սարյանի հետ: Նա սոսկ միայն նկարիչ չէր, այլ՝ մեկը, որը կարողանում էր մարդկանց սովորեցնել տեսնել իր ձեւով: Սարյանի հետ հանդիպումը թերեւս այն հանգրվանն էր, որը վճռելու էր, թե Բելիի այցելությունն ինչպես էր հանձնվելու թղթին՝ որպես փորձառություն եւ հուշագրություն: Բելին Հայաստան էր ժամանում որպես գրող, որը կարողանում է ոչ միայն դիտել, այլ նաեւ՝ տեսնել:

«Հայաստան» հատորում ամփոփված նրա հիշողություններում, ակնարկներում եւ նամակներում Սարյանը հառնում է ոչ թե որպես նկարագրային օբյեկտ, այլ՝ որպես ուղեկցող: Նրա հետ է Բելին կարողանում կարդալ քաղաքը, բնապատկերներն ու գույները: «Գեղանկարչությունը տեսնելու արվեստն է»,- մեջբերում է Բելին Պետրով-Վոդկինին: Սակայն հենց Սարյանն է, որ այդ սկզբունքը, որպես կենդանի զբոսանք երեւանյան այն ժամանակվա նեղլիկ փողոցներով, կյանքի է կոչում գրողի համար: Սարյանը Բելիի համար մի ողջ պատկերասրահ էր՝ կերպարվեստի «ալֆան ու օմեգան», որտեղ գույները բռնկվում են վառ առկայծումով եւ հյուսում տեսական բնապատկերների խստաբարո սինթեզները՝ բարձրացված մինչեւ սխեմա-պատկեր համակարգ, որով գիտակցության մեջ դաջվում է Արեւելքը՝ առհասարակ: Սարյանի գործերը եւ նախատիպային են ընկալվում ռուս արվեստագետի կողմից, եւ վառ կենցաղ պատկերում: Դրանցում հատվում են նատուրալիզմն ու ռոմանտիկան՝ փիլիսոփայական հայացքով, որը կարողանում է ոչ միայն դիտել, այլ նաեւ տեսնել, կարդալ խորհրդանշաններում ամփոփվածն ու երեւակայությունը: Բելին խոստովանում է, որ երկու օր Հայաստանում շրջելուց հետո սկսել է Հայաստանը տեսնել ու զգալ Սարյանի կտավներով եւ հետո իր տեսածն ու զգացածը դուրս է բերել պատկերասրահի դահլիճներից, տարել սար ու դաշտեր, որպեսզի նկարչի կողմից իրեն ուսուցանված «տեսնելու արվեստը» զարգացնի այնտեղ, ինչպես Պետրով-Վոդկինն է արձանագրել, թե «գեղանկարչությունը գիտություն է՝ տեսնելու մասին»:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՒՅՆԻՍԿ ՈՉ ԲՈԼՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԱՅՊՊԵՍ ԿՎԱՐՎԵԻՆ

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Նիկոլ Փաշինյանն իր հանրային արարքներում, կեցվածքում, արտահայտություններում այնքան վաղուց եւ այնքան հաճախ է անմեղսունակություն ու խեղկատակություն ի ցույց դրել (իսկ 2018-ի մայիսին ՀՀ վարչապետի պաշտոնը գրավելուց ի վեր հազիվ թե որեւէ մեկը Փաշինյանից այլ որակ է տեսել ու ակնկալել), որ ինչ խելագարություն էլ անի, այլեւս չի զարմացնի: Խեղկատակ վարքը, թուլամիտ արարքները Փաշինյանի վարքագծային constant-ն ու նորմալն են:

Անձամբ ինձ իր արարքներում համարյա երբեւէ ոչինչ չի զարմացրել, բացի 2020-ի նոյեմբերի 9-ին չգիտես ինչ շինության բունկերից, խելագարի հայացքով, փաթ ընկնող լեզվով, աստված գիտի՝ ալկոհոլի, քնաբերի, թե թմրանյութի ազդեցության տակ ժամերով անհոդաբաշխ բարբաջելը: Համոզված եմ՝ Սենայի գետնախորշերի ամենաետին հարբեցողն էլ լիներ, անհարմար կզգար նման վիճակում մարդկանց առջեւ երեւալ: Իսկ սա կանգնել ու բարբաջում էր:

Այժմ էլ, փետրվարի 28-ին Փաշինյանի՝ ցուցադրաբար ու հրապարակային փողոցներում քարշ գալն ու пирожки (Փաշինյանի բառապաշարում երեւի՝ перашки) ծամել-кукуруза կրծելն այն ժամանակ, երբ սահմանակից երկրում լայնամասշտաբ պատերազմ էր սկսվել, ինձ 2020-ի բունկերային բարբաջանքի չափ զարմացրեց: Ոչ միայն եւ ոչ այնքան տարածաշրջանում ծագած անվտանգային խնդրին ՀՀ վարչապետի ոչ ադեկվատ եւ ոչ գիտակից արձագանքի տեսակետից, ինչի մասին, համոզված եմ, հազարավոր մարդիկ արդեն արտահայտվել, խոսել, գրել են, այլ Փաշինյանի՝ մարդկային դեգրադացիայի տեսակետից:

Ինչի՞ էր նման նրա՝ փետրվարի 28-ին փողոցներում ցուցադրական սնունդ որոճալը: Նման էր նրան, որ մեկն առավոտյան արթնանա եւ տեղեկանա կամ երեկոյան տուն վերադառնալիս տեսնի, որ հարեւան բակում դագաղ է դրված՝ սուգ է, վիշտ է, մարդիկ են հավաքված: Եվ ի՞նչ անի... Ոչ թե, ինչպես մարդկային վարվեցողությունը կպահանջեր, ծանոթ լինելու պարագայում մոտենա՝ ցավակցի կամ անծանոթ լինելու պարագայում ուղղակի լուռ անցնի, այլ դիտավորությամբ գնա կանգնի դագաղի կողքերը, մի տեղ, որպեսզի բոլորին երեւա, հատուկ մի առլեկինի ցիլինդր էլ դնի գլխին եւ սկսի ցուցադրաբար կարկանդակ ծամել՝ ներկաներին հատուկ ցույց տալու համար, թե որքան անհոգ է ինքը եւ կատարելապես անհաղորդ նրանց վշտին: Լավ, ամենաետին մարդն հանդես գալ, կամ լռել եւ ասպարեզում չերեւալ:

Սակայն ցավակցելու կամ լռել-չերեւալու փոխարեն այդպես ցուցադրաբար տեսախցիկները ետեւից գցած փողոցներում թրեւ գալն ու որոճալը կենդանական արարք էր՝ ի տես աշխարհի, որ բացահայտում է Փաշինյանի ոչ ադեկվատության ու անմեղսունակության աստիճանը: Եվ այդ անսքողելի հոգեկան խանգարվածությամբ էլ դեռ պատրաստվում է ընտրությունների մասնակցել՝ օր առաջ ասպարեզից հեռանալու փոխարեն:

ՀԳ. *Միայն մարտի 2-ին Փաշինյանի անունից բարեհաճել են ցավակցության տեքստ տարածել: Դա էլ՝ ակնհայտորեն ծամելու ընթացքում գրված տեքստ. «Ձերդ գերադասություն, մեծ անհանգստությամբ ենք հետեւում Իրանի շուրջ տեղի ունեցող զարգացումներին: Ընդունեք, խնդրեմ, իմ ցավակցությունները՝ Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության եւ քաղաքացիների շրջանում գրանցված զոհերի կապակցությամբ: Մշտապես կհիշենք Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի անձնական դերը Հայաստան-Իրան հարաբերությունների զարգացման գործում: Այս դժվարին պահին հույս ենք փայփայում Մերձավոր Արեւելքում խաղաղության ու կայունության շուտափույթ հաստատման համար: Օգտվելով առիթից՝ մաղթում եմ Ձեզ համբերություն, իսկ բարեկամ եւ հարեւան Իրանի ժողովրդին՝ խաղաղություն եւ տոկունություն»: Որեւէ մեկն այս տեքստից ընկալե՞ց, թե ինչ է պատահել Իրանում: Օրինակ, կարելի է ենթադրել, որ Իրանում երկրաշարժ է տեղի ունեցել, կամ Իրանի գերագույն առաջնորդը ծանր վնասվածք է ստացել: Բացի այդ, Իրանի գերագույն առաջնորդի պաշտոնը ճշգրիտ կոչվում է Իրանի Իսլամական Հանրապետության գերագույն առաջնորդող իշխանություն, ավելի գործածական՝ Իրանի գերագույն առաջնորդ: «Անձնական դեր» չեն ունենում, անձնական ներդրում են ունենում կամ դերակատարում, հույս չեն «փայփայում», հույս են տածում, խաղաղության հաստատման հույս չէ, այլ՝ վերահաստատման, քանի որ խաղաղությունը նոր է խաթարվել, ոչ թե «օգտվելով առիթից՝ մաղթում եմ», այլ՝ «Փորձության այս ծանր ժամին թույլ տվեք Ձեզ մաղթել»: Նման անգրագետ տեքստ գրելու համար պետք է նաեւ մի լավ կոնծած կամ էլ՝ նորաձեւ կրթված տգետ լինել:*

«ՎՈՒՅՍԸ ՎԱՌ ՊԱՀԵԼ»



Արմինե ԿՈՒՆԴԱԿՉՅԱՆ

Սա Ջեսի Ջեքսոնի՝ հայտնի քաղաքացիական իրավունքների պաշտպան եւ ԱՄՆ նախկին ստվերային սենատոր, ԼԳԲՏ+ իրավունքների ակտիվիստ, քաղաքական գործչի «մանտրան» է, որը մահացավ անցյալ շաբաթ: Նա շատ արդյունավետ օգտագործեց այդ «մանտրան»՝ սեւամորթ ամերիկացիներին իրենց ընտրական իրավունքների համար պայքարում էներգիա հաղորդելու համար: Ջեսի Ջեքսոնը Մարտին Լյութեր Քինգի սանն էր: 40 տարի շարունակ նա եղել է խտրականության, սեգրեգացիայի եւ Ջիմ Քրոուի դաժան քաղաքականության դեմ պայքարի առաջնագծում:

Նա նախագահի թեկնածու առաջադրվել է 1984-ին եւ պարտվել, սակայն զարմացրել է բոլորին՝ հավաքելով 7 միլիոնից ավելի ձայն: Այդ ռիսկային եւ համարձակ քայլը տարիներ անց հարթեց Բարաք Օբամայի համար հաջողության ճանապարհը: Հիշում եմ, երբ 1984-ին նա առաջադրվում էր նախագահի պաշտոնում, ես՝ որպես Կանանց ընտրողների լիգայի (League of Women Voters) անդամ, հանդիպեցի նրան: Լիգան նրա համար լավ քարոզարշավ իրականացրեց: Նա շատ խոնարհ, ընկերասեր մարդ էր, որ հանդես եկավ մի քանի հիանալի ոգեշնչող ելույթներով, որոնք հեշտությամբ կարող էին կիրառվել այսօր ԱՄՆ-ի առջեւ ծառացած իրավիճակում:

Նրա ուղերձն էր՝ «Երբեք չհանձնվել, երբեք տեղի չտալ կամ չհուսահատվել, վառ պահել հույսը... Ես մաղթում եմ, որ մայր հայրենիքի մեր հայրենակիցները որդեգրեն մտածողության այս ձեւը: Փոխանակ միմյանց հետ վիճելու վարչապետի պաշտոնի նախկին եւ ներկա թեկնածուների շուրջ, նրանք պետք է համախմբվեն: Հուսահատությունը ելք չէ... Թշնամին ուզում է, որ մենք հանձնվենք, ուզում է, որ մենք տեղի տանք պարտությանը եւ դադարենք պայքարել այլ առաջնորդության համար»:

Խայտառակված կապիտուլյանտ Նիկոլ Փաշինյանը հուսահատության անգամ իրեն նման վարք թույլ կտա՞: Վախենամ, նույնիսկ ոչ բոլոր կենդանիներն այդպես կվարվեն: Դիցուք, շները կամ ձիերը թաղման թափոր տեսնելիս հազիվ թե խրխնջան կամ թռչկոտեն:

Իսկ Փաշինյանի՝ փետրվարի 28-ին, փողոցներում ցուցադրաբար թրեւ գալն ու пирожок որոճալը խորքում հենց այդպիսի խրխնջոց էր ու թռչկոտում: Եվ այդտեղ Իրանի Իսլամական Հանրապետության կամ այնտեղ գործող օրվա իշխանության հանդեպ վերաբերմունքի հարցը չէ: Թեոկրատիկ թե աշխարհիկ, Պարսից պետությունը մեր հարեւանն է շուրջ 2500 տարի, Կյուրոս Մեծի ժամանակներից մինչ այսօր: Այդ հազարամյակների ընթացքում մենք հարեւան Իրանի հետ ունեցել ենք եւ պատերազմներ, եւ հաշտություններ, եւ թշնամանք, եւ բարեկամություն, բայց վերջնահաշվում՝ հազարամյակների հարաբերություններ եւ ներկայիս տեւական բարիդրացիություն: Այժմ այդ պետությունն իր պատմության երեւի ամենադժնդակ պատերազմներից մեկի մեջ է հայտնվել, եւ սպանվել է երկրի առաջնորդը: Այդքանը քիչ էր՝ սպանված այդ առաջնորդը նաեւ երկրագնդի 250-300 միլիոն շիա մահմեդականների հոգեւոր առաջնորդն է, ինչը նրան վերածում է համաշխարհային հոգեւոր առաջնորդներից մեկի: Հետեւաբար, տարրական քաղաքավարությունը, չասելու համար՝ ուղղակի մարդկային վարքը, Փաշինյանից պահանջում էր Իրանում սկսված պատերազմական գործողությունների եւ հաղորդվող զոհերի կապակցությամբ այդ օրը կամ ցավակցական ու պատշաճ խոսքով հանդես գալ, կամ լռել եւ ասպարեզում չերեւալ:

Սակայն ցավակցելու կամ լռել-չերեւալու փոխարեն այդպես ցուցադրաբար տեսախցիկները ետեւից գցած փողոցներում թրեւ գալն ու որոճալը կենդանական արարք էր՝ ի տես աշխարհի, որ բացահայտում է Փաշինյանի ոչ ադեկվատության ու անմեղսունակության աստիճանը: Եվ այդ անսքողելի հոգեկան խանգարվածությամբ էլ դեռ պատրաստվում է ընտրությունների մասնակցել՝ օր առաջ ասպարեզից հեռանալու փոխարեն:

ՀԳ. *Միայն մարտի 2-ին Փաշինյանի անունից բարեհաճել են ցավակցության տեքստ տարածել: Դա էլ՝ ակնհայտորեն ծամելու ընթացքում գրված տեքստ. «Ձերդ գերադասություն, մեծ անհանգստությամբ ենք հետեւում Իրանի շուրջ տեղի ունեցող զարգացումներին: Ընդունեք, խնդրեմ, իմ ցավակցությունները՝ Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության եւ քաղաքացիների շրջանում գրանցված զոհերի կապակցությամբ: Մշտապես կհիշենք Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի անձնական դերը Հայաստան-Իրան հարաբերությունների զարգացման գործում: Այս դժվարին պահին հույս ենք փայփայում Մերձավոր Արեւելքում խաղաղության ու կայունության շուտափույթ հաստատման համար: Օգտվելով առիթից՝ մաղթում եմ Ձեզ համբերություն, իսկ բարեկամ եւ հարեւան Իրանի ժողովրդին՝ խաղաղություն եւ տոկունություն»: Որեւէ մեկն այս տեքստից ընկալե՞ց, թե ինչ է պատահել Իրանում: Օրինակ, կարելի է ենթադրել, որ Իրանում երկրաշարժ է տեղի ունեցել, կամ Իրանի գերագույն առաջնորդը ծանր վնասվածք է ստացել: Բացի այդ, Իրանի գերագույն առաջնորդի պաշտոնը ճշգրիտ կոչվում է Իրանի Իսլամական Հանրապետության գերագույն առաջնորդող իշխանություն, ավելի գործածական՝ Իրանի գերագույն առաջնորդ: «Անձնական դեր» չեն ունենում, անձնական ներդրում են ունենում կամ դերակատարում, հույս չեն «փայփայում», հույս են տածում, խաղաղության հաստատման հույս չէ, այլ՝ վերահաստատման, քանի որ խաղաղությունը նոր է խաթարվել, ոչ թե «օգտվելով առիթից՝ մաղթում եմ», այլ՝ «Փորձության այս ծանր ժամին թույլ տվեք Ձեզ մաղթել»: Նման անգրագետ տեքստ գրելու համար պետք է նաեւ մի լավ կոնծած կամ էլ՝ նորաձեւ կրթված տգետ լինել:*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am